




ԼՈՌԻՆ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԱՐԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Վերլուծությունն իրականացվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի մասնաճյուղի «Ստեփանավանի «Լոռ» փրկարար ջոկատ» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի Հարգանքների կոդիքի մշակված Տեղական մակարդակում ռիսկի կառավարման մեթոդաբանության կիրառմամբ:

Примечание [с1]: Աշխատանքը ներառում է աղետների ռիսկի կառավարման փակ ցիկլի բոլոր բաղադրիչները, բացառությամբ «Ազդեցություն իրավիճակի վրա»։ Այն միայն վերլուծություն չէ:

Այս հարցը կքննարկենք հետագայում, եթե ավելի պարզ և հստակ կլինի մեր մոտեցումները:

Примечание [с2]: Երեխաներին կար...??? Նկարում երեխաներ են ...

Այս ուսումնասիրությունն իրականացվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի «ԱՌՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՆՎՈՒՄ» համատեղ ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության նրադաքացիական գլխավոր վարչության կողմից:

Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ

ԼՈՐՈՒՆ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրականացնող՝ «Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ՀԿ-

Աղետների ռիսկի վերլուծության թիմ.

Աննա Առաքելյանը, «Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ՀԿ հրահանգիչ

«Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ՀԿ կամավորներ՝

Սյուզաննա Անդրեասյանը, Անի Պետրոսյան, Լիլիթ Իրիցյանը

Վերլուծության պատասխանատու՝

Անժելա Բադալյան՝ «Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ավագ հրահանգիչ, ՀՀ ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս,

ԱՌՆ գործընթացի պատասխանատու՝

Արմեն Առաքելյան՝ «Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ՀԿ նախագահ, ՀՀ

ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միջին մասնագիտական ծրագրերի ղեկավար, դասախոս

Ծրագրի ղեկավար՝

Արա Բարսեղյան, ԱՌՆ ազգային պլատֆորմի փոխտնօրեն

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վտանգներին դիմակայելու ամենալավ միջոցը աղետակայուն համայնք ունենալն է

Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) գործնառնությունը, լինելով զարգացման գործընթացի անբաժանելի մաս, լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես աղքատ և զարգացող երկրների համար: Այն դասվում է առաջնահերթ խնդիրների շարքում նաև Հայաստանում, որի լավագույն ապացույցը Հայաստանի կառավարության կողմից վերջերս հաստատված ԱՌՆ ռազմավարությունն է (7 մարտի, 2012թ.): Հանդիսանալով Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգից բխող գործառնություն՝ ԱՌՆ-ն դիտվում է որպես պետության անվտանգության և կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը և, համաձայն ԱՌՆ ռազմավարության դրույթների և վերջինիս իրականացման 2012-2015թթ. պլանի, պետք է ներառվի զարգացման ոլորտային և ճյուղային պլաններում:

ԱՌՆ գործնական ինտեգրումը զարգացման ծրագրերում և գործընթացներում, մասնավորապես, համայնքային մակարդակում, լուրջ մարտահրավեր է և հանդիսանում է Նոր մտածողության և գործելակերպի, այն է՝ Նոր ԱՌՆ մշակույթի ձևավորման համապարփակ գործընթացի բաղկացուցիչ մասը: Աղետների ռիսկի նվազեցումը տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման ընդհանուր համակարգի բաղադրիչն է, որը մարզային և ազգային բաղադրիչների հետ համատեղ ձևավորում է ազգային համալիր ԱՌՆ համակարգ:

Համայնքում աղետների ռիսկի վերլուծությունն (ԱՌՎ) իրենից ներկայացնում է տվյալ համայնքին սպառնացող ռիսկերի բնույթի և մասշտաբի համեմատական վերլուծություն տարբեր բնական և մարդածին վտանգների ու խոցելիության համար, որոնք կարող են համայնքին պատճառել մարդկային և նյութական կորուստներ, լուրջ վնաս հասցնել շենք-շինություններին, ենթակառուցվածքներին, ծառայություններին, կենսապահովման միջոցներին:

Լոռու մարզի Թումանյան, Մարց, Քարինջ, Ահիծոր, Լորուտ, Աթան և Շամուտ համայնքներում ԱՌՎ իրականացվել է տեղական մակարդակում ռիսկերի կառավարման (ՏՄՌՎ) մեթոդաբանության կիրառմամբ, որը համալրվել է երեխաների խոցելիության և համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտի վերլուծությամբ:

ՏՄՌՎ-ն իրենից ներկայացնում է համայնքին սպառնացող ռիսկերի բացահայտման գործիքների և կառավարման գործառնությունների ամբողջական հավաքածու, որը ձևավորվել է Հայաստանում նմանատիպ հայտնի գործիքների փորձարկման և ադապտացման արդյունքում: Այն մշակվել է ՏՄՌՎ-ի զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և աջակցությամբ՝ հիմք ընդունելով:

- ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարության համապատասխան դրույթները,
- Հյուզոյի գործողությունների ծրագրի գերակայությունները,
- ԱՌՆ ազգային համակարգի կարողությունների զարգացման համար նախանշված գերակա ուղղությունները:

ՏՄՌՎ-ն ԱՌՆ ազգային մշակույթի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող կարևորագույն քայլերից մեկն է և նպաստում է դիմակայուն համայնքների կայացմանը Հայաստանում:

Մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի համայնքը.

- լինի շահագրգիռ ու կամավորապես մասնակցի գործընթացին,
- լինի պատրաստակամ՝ ներդնելու սեփական ներուժը ԱՌՆ միջոցառումների պլանավորման ու իրականացման գործում,

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ կրի պատասխանատվություն՝ աղետակայուն համայնքի կայուն զարգացման և դրա հետ կապված որոշումների ընդունման և իրականացման համար:

The offered tools and procedures intends to support local governments to undertake a disaster risk analysis. A risk analysis allows local governments to identify, prioritize, plan and implement measures that help to reduce vulnerability and risks from natural and technological hazards. The guide familiarizes the regional and local with the basic components of disaster risk analysis. It also provides tips on how to manage the assessment and planning process.

The Disaster Risk Analysis (DRA) for Local Governments in Central and Eastern Europe and Commonwealth of Independent States tool developed by UNICEF CEE/CIS Regional Office was used to enhance the Local level Risk Management (LLRM) developed by the professionals and experts from UN extended Disaster Management Team member organizations, and implemented by the DRR National Platform and partner organizations in Armenia. The screening of the document was carried out to ensure incorporation of child vulnerability and the needs of all children with the particular focus on the most vulnerable.

The methodology encourages participation of community members and enhances the planning and implementation of DRR activities at local level through incorporating them into Community Development Plans.



Աղետների ռիսկի վերլուծությունընաև հնարավորությունէտալիսուսումնական հաստատությունների անձնակազմին և երեխաներինբացահայտելաղետներիևարտակարգիրավիճակներիհետկապվածխնդիրները, օգտագործելիրենցգիտելիքը և կարողությունները՝ դիմակայելուաղետներիևարտակարգիրավիճակներիազդեցությանը, բարձրացնելիրենցիմացությունընպատրաստվածություննաղետներին նախապատրաստմանևարձագանքմանտրորոտում՝ երեխաների և անձնակազմի կյանքերը փրկելու ու վնասները նվազագույնի հասցնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ	7
1.1Երկրորդական աղբյուրների տվյալներ	8
1.1.1Լորուտհամայնքի տեղադիրքը և կլիման	8
1.1.2Համայնքի բնակչությունը	8
1.1.3Լորուտհամայնքի սպառնացող վտանգավոր երևույթները	10
1.1.4Հիմնական շինություններ	10
1.1.5Զբոսայգի	11
1.1.6Արտաքին և ներքին ճանապարհներ	11
1.1.7Արտաքին և ներքին տրանսպորտ	11
1.1.8Կոյուղի	11
1.1.9Աղբահանություն	12
1.1.10Զրամատակարարում	12
1.1.11Ոռոգում	12
1.1.12Գազաֆիկացում	12
1.1.13Հատուկ ծառայություններ	12
Հրդեհ-փրկարար ծառայություն	12
Ոստիկանություն	12
1.1.14Կենսական կարևոր համակարգեր	12
Կրթական համակարգ	12
Մանկապարտեզ	13
Առողջապահություն	14
Մշակույթ	14
Պատմամշակութային կոթողներ	14
Կապի միջոցներ	14
Տեղեկատվական աղբյուրներ	14
1.2Այլնադիտական զննում	14
1.3Քարտեզագրում	15
1.4Սեզոնային օրացույց	18
1.5Պատմական օրացույց	20
Համայնքում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունների աղյուսակ	22
1.6Քննարկումներ ֆոկլոր-խմբերում	23
1.7Կիսակառուցվածքային հարցազրույցներ	26
1.7.1Արտակարգ դիմացիների նդիմակայելու և արձագանքելու համայնքի կարողությունները	27
1.7.2Համայնքում վերջին տարիներին տեղի ունեցած ԱԻ-ը և դրանց հետևանքները:	27
1.8.2Անգլադաշին հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով	28
1.8.1Համայնքի սպառնացող հիմնական վտանգավոր երևույթներ	28
Համայնքի սպառնացող հիմնական վտանգավոր երևույթների աղյուսակ	30
1.8.2Վտանգավոր երևույթների սեզոնայնություն	32
1.8.3Վտանգավոր երևույթների հաճախականությունը	34
1.8.4Համայնքում տեղի ունեցած արտակարգ դիմացիներից բնակչության կրած վնասները	35
1.8.5Վտանգների և խոցելիության համադրությունը	35
1.8.6Աղետների նդիմակայելու վերաբերյալ համայնքի բնակչության գիտելիքները	38
2. ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ	45
2.1 Եզրակացություններ և առաջարկություններ	45
2.2 Համայնքի ուժեղ կողմերը	46
2.3 Համայնքի թույլ կողմերը	46
2.4 Համայնքի հնարավորությունները	47
2.5 Համայնքի և մասնավորապես աղետների ռիսկի նվազեցման գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնները	47
Համայնքի բնակիչների կողմից բացահայտված խնդիրները, դրանց պատճառներն ու բացասական հետևանքները, ինչպես նաև հնարավոր լուծումները`	48
ՀՀ ԳՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՈՒ ՄԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԱՐՈՎԱԴԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ	54
3.ԼՈՐՐՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԱԿՑՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆՈՂՆԵՐԴՈՏՈՂ ԱՌՆԱՊԻՆԴԻՐՆԵՐԵՎԴԱՆՆԱԳԱՐԱԶՆԱԳՐԵԼՈՒԹՅՈՒՆ	57
3.1 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՎԱԿՐԻՏՆԵՐԻ ՎԱՐՈՎԱԴԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ	57
3.2 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ	62

3.3ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂԴՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒՑՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅԱՆ	66
4. Երեխաները և համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտի վերլուծություն	74
4.1 Տնտեսական ոլորտ	74
Տնտեսական ոլորտի ՈԲԹՅՎ վերլուծություն	74
4.2 Սոցիալական ոլորտ	75
Սոցիալական ոլորտի ՈԲԹՅՎ վերլուծություն	75
4.3 Կրթության ոլորտ	76
Դպրոցի ՈԲԹՅՎ վերլուծություն	77
4.3.1 Լորուտ համայնքի դպրոցի և մանկապարտեզի շենքերի տեխնիկական փնտախառնակի մասերի ի վրա մակարդակի գնահատման աշխատանքների	78
4.3.2 Լորուտ համայնքի դպրոց	78
4.3.3 Լորուտ համայնքի մանկապարտեզ	80
5. Սոցիալական ծառայությունների դիմակայունություն	88
6. Համայնքի դիմակայունություն	91
7. Համայնքի մատչելիության նկարագրություն	92



ԼՈՐՈՒՆ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՆՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղետների ռիսկի վերլուծությունն (ԱՌՎ) իրենից ներկայացնում է տվյալ համայնքին սպառնացող ռիսկերի բնույթի և մասշտաբի համեմատական վերլուծություն տարբեր բնական և մարդածին վտանգների ու խոցելիության համար, որոնք կարող են տվյալ համայնքին պատճառել մարդկային և նյութական կորուստներ, լուրջ վնաս հասցնել շենք-շինություններին, ինֆրակառուցվածքներին, ծառայություններին, կենսամիջոցներին:

Լորուտ համայնքում ԱՌՎ իրականացվել տեղական մակարդակում ռիսկերի կառավարման (ՏՄՌՎ) մեթոդաբանությունը, որը ծրագրի շրջանակներում համալրվել էր **երեխայագայուն** բաղադրիչով:

ՏՄՌՎ-ն գործիքների և կառավարման գործառնությունների ամբողջություն է, որոնց կիրառումը նպաստում է համայնքային մակարդակում աղետների ռիսկի բացահայտմանն ու նվազեցմանը: Մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի համայնքը.

- լինի շահագրգիռ ու կամավորապես մասնակցի գործընթացին,
- լինի պատրաստակամ՝ ներդնելու սեփական ներուժը ԱՌՆ միջոցառումների պլանավորման ու իրականացման գործում,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ կրի պատասխանատվություն՝ աղետակայուն համայնքի կայուն զարգացման և դրա հետ կապված որոշումների ընդունման և իրականացման համար:

1. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՈՒ ՀԵՏԱՉՈՏՈՒՄ

Լորուտ համայնքում աղետների ռիսկի վերլուծության (ԱՌՎ) գործընթացն իրականացվել է մասնակցային սկզբունքով՝ ԱՌՆԱԴ-ի, «Ստեփանավանի «Լոռե» փրկարար ջոկատ» ՀԿ-ի, համայնքի բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ: Հարկ է նշել հիմնական դերակատարների՝ տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավար, ավագանի, համայնքապետարանի աշխատակիցներ), հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուժկետի ներկայացուցիչների և բնակիչների շահագրգռվածությունը ԱՌՆ վերլուծության գործընթացի ժամանակ:

Համայնքում ԱՌՆ ուսումնասիրության գործընթացին մասնակիցել են ընդհանուր թվով 71 հոգի: Այդ թվում.

- համայնքի ընդհանուր ժողովի մասնակիցներ – 7 մարդ, որոնցից.
 - համայնքի ղեկավար,
 - համայնքապետարանի աշխատակիցներ – 2,
 - համայնքի բնակիչ – 2,
 - դպրոցի փոխտնօրեն,
 - նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն,
- անասնապահությամբ զբաղվողների ֆոկլուս խումբ – 5,
- կրթական ոլորտի ֆոկլուս խումբ – 9 (տնօրեն (տղամարդ), 3 ուսուցիչ (3 կին) և 5 աշակերտ (2 տղա, 3 աղջիկ))
- հարցմանը մասնակցած համայնքի **այլ** բնակիչներ – 50:

Ուսումնասիրության մասնակիցների 48%-ը եղել են տղամարդիկ, 52%-ը՝ կանայք:

Примечание [с3]: Գրկնվում է ... կա նաև ՀԱԳԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ մեջ

Примечание [с4]: Գրկնվում է ... կանաև ՀԱԳԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ մեջ

Մասնակիցներն ըստտարիքի՝

- 7% կազմել է մինչև 18 տարեկան տարիքային խումբը,
- 11% կազմել է 18-26 տարիքային խումբը
- 61% կազմել է 26-63 տարիքային խումբը,
- 21% կազմել է 63-ից անց տարիքային խումբը:

ԱՌՎ արդյունքում հավաքագրված տվյալները՝ համայնքի հետ համատեղ, ընդհանուր ժողովում ենթարկվել են համեմատական վերլուծության, որի արդյունքների հիման վրա մշակվել են առաջարկություններ՝ համայնքին սպառնացող վտանգների նվազեցման ուղղությամբ:

1.1 Երրորդական աղբյուրների տվյալներ

Լորուտ համայնքի վերաբերյալ տվյալները և տեղեկությունները հավաքագրվել են Լոռու մարզպետարանից, Լորուտի համայնքապետարանից, ՀՀ ՏԿԱԻՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարար վարչությունից, ՀՀ կառավարությանն առնթեր Կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքից, ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի Հայկական կրթական միջավայրից, ՀՀ ՏԿԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայության տվյալների բազայից և այլ աղբյուրներից:

1.1.1 Լորուտ համայնքի տեղադիրքը և կլիման

Լորուտ համայնքը գտնվում է Լոռու մարզում, Թումանյանի տարածաշրջանում, Մարց գետի հովտի աջափնյա լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հյուսիս, Ալավերդի քաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք, անտառապատ, գեղատեսիլ վայրում: Գյուղը տեղակայված է ծովի մակերևույթից մոտ 1500մ բարձրության վրա:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 7652.38 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 4957.5 հա:

Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 7.1°C, մթնոլորտային տեղումների միջին քանակը՝ 600-700 մմ:

1.1.2 Համայնքի բնակչությունը

Լորուտ գյուղը հիմնադրվել է 1843 թվականին:

Լորուտ համայնքի բնակիչների վերաբերյալ տվյալները առկա են 1897թ.-ից: Լորուտ


Բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է վերցված է ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայքերից:

համայնքի բնակչության թիվը կազմում էր՝

- 1897թ-ին – 621,
- 1926թ-ին – 1330,
- 1959թ-ին – 1367,
- 1970թ-ին – 1333,
- 1979թ-ին – 1076,
- 2001թ-ին – 1126,
- 2004թ-ին – 980,
- 2009թ-ին – 1084,
- 2010թ-ին – 1088,
- 2011թ-ին – 1075,
- 2012թ-ին – 1014,
- 2013թ-ին – 1012,

• 2014թ-ին – 1026,

• 2015թ-ին – 1026 բնակիչ:



Համայնքի բնակչության թիվը 1897-2015թթ.

Ներկայումս Լորուտ գյուղի գրանցված բնակչության թիվը կազմում է 1026 մարդ, որից տղամարդիկ կազմում են 48 %, կանայք՝ 52%: Գյուղում առկա են 948-ը:

Տեղական ինքնակառավարումը իրականացվում է համայնքապետի և 5 հոգուց (5 տղամարդ) բաղկացած ավագանու կողմից: Համայնքապետի կողմից ձևավորված համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց (4 տղամարդ, 1 կին):

Տեղեկություններ Լորուտ համայնքի երեխաների մասին

Երեխաների (0-18տ.) ընդհանուր թվաքանակը համայնքում 145 հոգի, որոնցից 81-ը տղա, 64-ը աղջիկ:

- *համայնքում հաշմանդամություն ունեցող երեխաներ չկան,*
- *մինչ մանկապարտեզային տարիքի երեխաներ՝ 22 (12 տղա, 10 աղջիկ),*
- *մանկապարտեզ հաճախում են 25 երեխաներ (14 տղա, 11 աղջիկ),*
- *դպրոց հաճախող երեխաների քանակը 104 է, որոնցից 56 տղա, 48 աղջիկ,*
- *այլ համայնքներից համայնքի դպրոց հաճախում են 6 երեխաներ (1 տղա, 5 աղջիկ),*
- *այլ համայնքների դպրոցներ հաճախող երեխաներ չկան,*
- *դպրոց չհաճախող դպրոցահասակ երեխաներ չկան,*
- *համայնքում չկան փախստականների կամ միգրանտների երեխաներ,*
- *ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ,*
- *սոցիալական աջակցություն է ստանում համայնքի 18 ընտանիք, որոնցում բնակվում են 10 տղա և 8 աղջիկ:*

Լորուտի համայնքապետի կողմից տրամադրած տեղեկատվություն

1.1.3 Լորուտ համայնքի նսպառնացող վտանգավոր երևույթները

Ըստ համայնքում կատարված ուսումնասիրությունների կարելի է փաստել, որ համայնքին սպառնում են տարբեր բնույթի վտանգներ:

Բնական վտանգավոր երևույթներից համայնքի համար սպառնալիք են ներկայացնում երկրաշարժը, երաշտը, կարկտահարությունը, սողանքը, կայծակը, սելավը, ցրտահարությունը, առատ տեղումները, քարաթափումները ուժեղ քամիները: Վերջին տարիներին արձանագրվել են կարկտահարության, ցրտահարության և երաշտի դեպքերի հաճախականության աճ: Երաշտի բացասական ազդեցությունը պայմանավորված է ոռոգման ցանցի բացակայությամբ:

ՀՀ ՏԿԱԻՆԻ Հիդրոտեղակայության և մոնիտորինգի պետական ծառայության ղեկավարության տարի 30-100 տարիների տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ հանրապետության ողջ տարածքում տարեկան տեղումները պակասել են 5.8%-ով, ընդ որում տարածման ակախությամբ միջինը 7.1%-ով և ցուցում է գնում աճել են 8.5%-ով: Եթե նման միտումը պահպանվի, ապա 2100 թ.-ին օդի ջերմաստիճանը կբարձրանա 1.7°C-ով, տեղումների քանակը կնվազի 10%-ով: Այդ հետևանքները կարող են ապաստանել կլիմայի ցածր մոնիտորինգի տեսության ճյուղերի վրա:

Մարդածին բնույթի վտանգներից համայնքի համար սպառնալիք են ներկայացնում մավտովթարները, կենցաղային հրդեհները, պայթյունները, շենքերի, շինությունների փլուզումները: Բնակչության շրջանում ԱՌՆ վերաբերյալ գիտելիքների պակասը բարձրացնում է համայնքի խոցելիության աստիճանը:

Համայնքի համար վտանգ են ներկայացնում անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները, որոնք հիմնականում մարդկանց անփութության և անզգուշության հետևանք են: Վերջիններս իրենց բացասական ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա: Կլիմայի փոփոխության պայմաններում խոտածածկ տարածքների հրդեհները էկոհամակարգի համար դառնում են ամենաանմիջական և խոշոր սպառնալիքը: Ավելացող հրդեհների հետևանքներին գումարվում է երաշտի և ջերմային սթրեսի պատճառով կրճատվող վերարտադրությունը: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները ծանր հետևանքներ են թողնում նաև մարդու կենսակերպի և առողջության վրա:

Այլ բնույթի վտանգներից համայնքի բնակչության և գյուղատնտեսական կենդանիների համար սպառնալիք են ներկայացնում վայրի գազանները, հատկապես գայլերը, որոնց ներխուժումները համայնքի տարածք դարձել են ավելի հաճախակի: Վայրի գազանները դառնում են նաև մարդկանց շրջանում վախի առաջացման պատճառ:

Համայնքի բնակչության գերակշիռ մասը զբաղվում է անասնապահությամբ: Անասնապահության համար վտանգ են ներկայացնում անասնախամաճարակները, որոնք հիմնականում կանխարգելիչ միջոցառումների բացակայության հետևանք են:

Համայնքի գյուղացիական տնտեսություններին մեծ վնաս են հասցնում մկնանման կրծողները, միջատները և թրթուռները: Ըստ վիճակագրության, կրծողների պատճառով գյուղատնտեսությանը տարեկան հասցվող վնասի չափը կարող է կազմել 10-12%: Դաշտային մկներն ու մկնանման այլ կրծողները հիմնականում վնասում են ցանքատարածքները, բերքը և սնունդը:

1.1.4 Հիմնական շինություններ

Համայնքի հիմնական գործող շինություններն են համայնքապետարանը, դպրոցը, մանկապարտեզը, բուժկետը և փոստը:

Համայնքում առկա է նաև 4 անասնադոմ բաղնիք, հացի փուռ, պահեստ, ճաշարան, արհեստանոց, ավտոպարկ: Անավարտ վիճակում է մշակույթի տան շենքը:


1.1.52 Բաղվածություն

Համայնքի տնտեսական առաջատար ճյուղը անասնապահությունն է: Բացի անասնապահությունից զբաղվում են նաև մեղվաբուծությամբ: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ տարածքներում: Տնային պայմաններում իրականացվում է կաթի վերամշակումը: Արտադրված կաթնամթերքի մի մասը վաճառվում է տարածաշրջանի շուկաներում:

Ըստ գյուղապետի՝ համայնքի աղքատության տոկոսը կազմում է 30%:

1.1.6 Արտաքին և ներքին ճանապարհներ

Նորուպյուրը գտնվում է 3-22Ս6 - Դետը –Մարց հանրապետական նշանակության ավտոճանապարհից 1,5 կմ հեռավորության վրա: Մ-6՝ Վանաձոր (Մ-3 հատման կետ)-Ալավերդի-Վրաստանի սահմանամիջպետական ավտոճանապարհից 20 կմ հեռավորության վրա: Համայնքի միջպետական ավտոճանապարհի հետ կապող ճանապարհը գտնվում է ոչ բարվոք վիճակում և ունի բարեկարգման, ասֆալտապատման կարիք:



Ներհամայնքային ճանապարհները ունյալ են գտնվում են վատ վիճակում, ունեն բարեկարգման և լուսավորման կարիք:

Համայնքում առկա է 2 ավտոմոբիլային կամուրջ, որոնք ունեն վերանորոգման կարիք, և 1 հետիոտնային, որը գտնվում է նորմալ վիճակում:

1.1.7Արտաքին և ներքին տրանսպորտ

Կապը մարզկենտրոնի և հարևան համայնքների հետ իրականացվում է երթուղային ավտոբուսի և միկրոավտոբուսի միջոցով:

1.1.8 Կոյուղի

Համայնքը կոյուղացված չէ:

1.1.9 Աղբահանություն

Համայնքում չիկատարվում կազմակերպված աղբահանություն: Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով: Բնակիչների մի մասը աղբը այրում է, մի մասն էլ թափում գյուղի տարբեր հատվածներում:

1.1.10 Զրամատակարարում

Համայնքը խմելու ջուրը ստանում է բնական աղբյուրներից՝ ինքնահոս եղանակով: Զրաբաշխումը կատարվում է կենտրոնացված ջրամատակարարման համակարգի միջոցով: Արտաքին ցանցի երկարությունը կազմում է 14 կմ: ՌԻՍԻ հիմնանորոգման կարիք: Խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է վատ վիճակում և ունի վերակառուցման կարիք:

Համայնքն ունի 3 ջրամբար, որոնք ունեն վերանորոգման կարիք:

Խմելու ջրով ապահովված է համայնքի 50%-ը: Խմելու ջուրը հիմնականում տրվում է շուրջօրյա:

1.1.11 Ոռոգում

Համայնքը չունի ոռոգման ցանց:

1.1.12 Գազաֆիկացում

Համայնքը գազաֆիկացված է:

1.1.13 Հատուկ ծառայություններ

Հրշեջ-փրկարար ծառայություն

Տարածաշրջանը սպասարկվում է ՀՀ ՏԿԱԻՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարար վարչության ստորաբաժանումների կողմից: Մոտակա ստորաբաժանումը տեղակայված է Ալավերդի համայնքում:

Ոստիկանություն

Համայնքը սպասարկվում է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ալավերդու բաժնի կողմից: Մոտակա հենակետը տեղակայված է Ալավերդի համայնքում:

1.1.14 Կենսական կարևոր համակարգեր

Կրթական համակարգ

Լորուտ համայնքում իրականացվում է միջնակարգ կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:

Դպրոց

1924 թվականից Լորուտում գործել է տարրական դպրոց՝ քառամյա կրթությամբ: Տարրական դպրոցը շարունակել է իր աշխատանքը մինչև 1931 թվականը: 1932 թվականից սկսել է գործել յոթնամյա, իսկ 1938 թ-ից միջնակարգ դպրոց:
1941 թվականին շահագործման է հանձնվել նորակառույց դպրոցական շենքը, իսկ 1974 թ. շահագործման է հանձնվել ներկայիս տիպային շենքը՝ նախատեսված 400 աշակերտի համար:

Ներկայիս դպրոցի հիմնական մասնաշենքը տիպային եռահարկ քարե շինություն է: Կա նաև մեկ միահարկ մասնաշենք և մեկ միահարկ մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենք, որոնք միմյանց միանում են միջանցքով: Դպրոցի ընդհանուր մակերեսը կազմում է 2564մ²:



Լորուտ համայնքի միջնակարգ դպրոցի շենքը

Դպրոցն ունի 15 դասասենյակ, համակարգչային սենյակ, ՆՁՊ դասասենյակ, լաբորատորիա, ուսուցչանոց, հաշվապահության և տնօրենի սենյակ, գրադարան, բացօթյա սպորտ հրապարակ:

Աշակերտների թիվը կազմում է՝ 104, աշխատողներինը՝ 30 մարդ:

Մանկապարտեզ

Համայնքում իրականացվում է նախադպրոցական կրթություն: Համայնքում գործում է մանկապարտեզ:

Մանկապարտեզի շենքը մեկհարկանի է, նորմալ վիճակում:



Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքը

Երեխաների թիվը կազմում է՝ 25, աշխատողներինը՝ 5 մարդ:

Առողջապահություն

Համայնքում գործում է բուժկետ: Բուժկետն ապահովված է շենքային պայմաններով, առաջին օգնության պարագաներով: Բուժկետում աշխատում է 1 բուժքույր:

Մշակույթ

Համայնքի մշակույթի տունը գտնվում է կիսակառույց վիճակում:

Պատմամշակութային կոթողներ

Գյուղը հարուստ է պատմամշակութային կոթողներով: Համայնքում կա եկեղեցի, որը գտնվում է շատ վատ վիճակում: Հուշարձան, որը գտնվում ոչ նորմալ վիճակում, կան նաև խաչքարեր, հին բնակատեղի:

Կապի միջոցներ

Գյուղում առկա են բջջային հեռախոսակապ, ինտերնետ և փոստային ծառայություն:

Տեղեկատվական աղբյուրներ

Տեղեկատվական աղբյուրներից համայնքին հասանելի են հանրային ռադիոն, հանրային և արբանյակային հեռուստատեսությունը, ինտերնետը և մամուլը:

1.2 Ակնադիտական զննում

Համայնք մտնելու առաջին իսկ պահից ԱՌՆ թիմի անդամների և համայնքի պատասխանատու անձի հետ միասին իրականացվել է ակնադիտական զննում, որի ընթացքում գրանցվել են ԱՌՎ գործընթացի համար անհրաժեշտ առաջնային տպավորությունները համայնքի շինություններից, ճանապարհներից, աղբահանությունից և այլն:

Ակնադիտական զննումների աղյուսակ

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	Նկարագիր
Ինֆրաստրուկտուրա/ենթակառույցներ/	
Հիմնական շինությունները	Համայնքի բնակելի ֆոնդը հիմնականում կազմված է երկհարկանի քարե առանձնատներից: Բնակելի տները մեծամասամբ գտնվում են նորմալ վիճակում: Տների մեծ մասի վրա կան տեղադրված արբանյակային ալեհավաքներ:
Ճանապարհներ հիմնական / ներքին	Միջհամայնքային ճանապարհները ունեն վերանորոգման և ասֆալտապատման կարիք: Ներհամայնքային ճանապարհները գրունտային են: Ներհամայնքային ճանապարհներն ունեն բարեկարգման, ասֆալտապատման և լուսավորման կարիք:
Էլեկտրաէներգիա	Համայնքն ամբողջությամբ էլեկտրաֆիկացված է:
Զեռուցում	Համայնքում ջեռուցման հիմնական աղբյուրներն են վառելափայտը, գազը և էլեկտրաէներգիան:

Կամուրջ	Համայնքում առկա է 2 ավտոմոբիլային կամուրջ, որոնք ունեն վերանորոգման կարիք, և 1 հետիոտնային, որը գտնվում է նորմալ վիճակում:
Կենսական կարևոր կառույցներ	
Համայնքապետարան	Համայնքապետարանի շենքը գտնվում է նորմալ վիճակում, կա գույքի ձեռքբերման կարիք:
Մշակույթի տուն	Մշակույթի տունը գտնվում է կիսակառույց վիճակում:
Դպրոց	Դպրոցի շենքը եռահարկ է, գտնվում է նորմալ վիճակում: Դպրոցն ունի տանիքի փոփոխման, սպորտդահլիճի և հանդիսությունների դահլիճի վերանորոգման և համապատասխան գույքի ձեռքբերման կարիք:
Մանկապարտեզ	Համայնքում իրականացվում է նախադպրոցական կրթություն: Համայնքում գործում է մանկապարտեզ: Մանկապարտեզի շենքը մեկհարկանի է: Շենքի մի մասը գտնվում է նորմալ վիճակում, իսկ մյուս մասը ունի վերանորոգման կարիք: Ունի խնդիրներ կապված ջրամատակարարման և սանիտահիգիենային խնդիրներով:
Սոցիալ-տնտեսական ոլորտ	
Կրթություն	Արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթօջախները գտնվում են մարզկենտրոնում, Երևանում, Լոռու մարզի այլ քաղաքներում:
Առողջապահություն	Հիմնական բժշկական խայասարկումը բնակչությանը հասանելի է վերականգնող, Վանաձորում և այլ քաղաքներում:
Չբաղվածություն	Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Համայնքում զարգանում են ամենօրյա բնակչությանը: Տնամերձերում զբաղվում են այգեգործությամբ և հողագործությամբ: Գյուղատնտեսությունից ստացվող եկամուտը ուղղակիորեն կախված է նաև բնության քմահաճույքներից և կրում է սեզոնային բնույթ:

Примечание [с5]: Կառույցների թողնել ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ բառը, քանի որ համայնքը սպասարկվում է Դսեղի Ակ կողմից նույնիսկ...

1.3 Քարտեզագրում


Քարտեզագրման նպատակն է բացահայտել և համայնքի համար ակնառու դարձնել համայնքի աղետավտանգ ու ռիսկային տեղանքները, ինչպես նաև համայնքի կարողություններն ու խոցելիությունը՝ վերջիններս զետեղելով համայնքի քարտեզում:
--

Քարտեզագրումը նպատակ ունի նաև համայնքի համար ակնառու դարձնել նաև այն տեղանքները, որոնք սովորաբար կամ տեսանելի չեն կամ էլ անուշադրության են մատնված: Ուսումնասիրության ընթացքում կատարվել են սխեմատիկ և վիզուալ գրանցումներ, լուսանկարվել են նաև վտանգավոր ու խոցելի տարածքները:

Հավաքագրված նյութերը տեղադրվել են համացանցից դուրս բերված քարտեզի վրա, քանի որ համայնքը չունի աշխատանքի համար անհրաժեշտ քարտեզներ:

Քարտեզ 2: Նախկինում GTZ-ի կողմից սելավի, սողանքի և հեղեղման վտանգների մասնագիտական ուսումնասիրության քարտեզ, ԳԵՈԿՈՍ

Մասշտաբ 1:10,000



Ակնադիտական զննումից և քարտեզագրումից հետո կազմակերպվել է ընդհանուր ժողով համայնքի բնակիչների և տարբեր մասնագետների ներգրավմամբ: Մասնակիցների թիվը եղել է 7: Ընդհանուր ժողովի ընթացքում ներկայացվել են, քննարկվել և լրացվել **ռիսկի գնահատման** մի շարք գործիքներ, որոնց արդյունքները ներկայացված են ստորև:

1.4 Սեզոնային օրացույց

Սեզոնային օրացույցի օգնությամբ վերհանվեցին տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցածադետներ, սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների, հիվանդությունների բռնկման ժամանակահատվածները համայնքի բնակիչների տեսանկյունից: Այն ցույց է տալիս համայնքին սպառնացող վտանգների ժամանակահատվածները, դրանց ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված ազդեցությունը:

Սեզոնային օրացույցը լրացվել է համայնքի հետմիասին, որի արդյունքները ներկայացված են ստորև:

Սեզոնայնություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Իրադարձություններ												
Սոցիալ-տնտեսական												
Բարձր եկամուտներ						x	x	x	x	x	x	x
Ցածր եկամուտներ	x	x										
Արտագնա աշխատանք			x	x								
Վերադարձ											x	x
Բերքահավաք								x	x			
Պարապուրդ	x	x										x
Անասունների մորթ				x	x				x	x		
Սերմնացան/տնամերձ			x	x								
Առողջապահական ոլորտ												
Գրիպի համաճարակ	x	x	x								x	x
Աղիքային ինֆեկցիաներ				x	x	x				x	x	
Բնածին վտանգներ												
Սողանք			x	x								
Ցրտահարություն			x	x								
Երաշտ						x	x	x				
Կարկտահարություն				x	x	x	x					
Կայծակ					x			x		x		
Սելավ				x	x							
Ուժեղ քամիներ		x	x						x	x	x	
Առատ տեղումներ				x	x		x			x	x	
Քարաթափումներ		x	x	x							x	x

Այլ վտանգներ													
Վայրի գազաններ	x	x	x	x								x	x
Մկնաման կրծողներ	x	x										x	x
Միջատներ							x	x	x	x			
Անտ.											x	x	x

Համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտի համար համեմատաբար բարենպաստ է ամառ-աշունժամանակահատվածը: Այս ժամանակահատվածում դիտվող բարձր եկամուտների պատկերը հիմնականում պայմանավորված

էանասնապահական ոլորտից ստացվող եկամուտներով:

Լրացուցիչ եկամուտներ բնակչությունը ստանում էնամեղվաբուծությունից, ինչպես նաև հարակից անտառներից և հանդամասերից հավաքված ձեռքբերումների, մրգերի և հատապտուղների վաճառքից: Լրացուցիչ եկամուտներ բնակչությունը ստանում է նաև արտագնա աշխատանքներից:

Համայնքի բնակչության մեծ մասը զբաղվում անասնապահությամբ: Այգեգործությամբ և հողագործությամբ բնակչությունը զբաղվում է տնամերձ տարածքներում: Ձմռան ժամանակահատվածում (դեկտեմբեր-փետրվար) դիտվում է թերզբաղվածություն: Այդ ժամանակահատվածում բնակչությունը զբաղվում է միայն անասնապահությամբ: Գարնան ժամանակահատվածում համայնքում կատարվում են ցանքսի աշխատանքներ, ամռանը և աշնանը՝ բերքահավաքի:

Պոտենցիալ ռիսկերի ցանկում ամենավտանգավորը երկրաշարժն է, որն իր բացասական ազդեցությունն է թողնում թե՛ տնտեսական, և թե՛ սոցիալական կյանքի վրա: Երկրաշարժերի հետևանքով հնարավոր են որոշ տների, շենք-շինությունների փլուզում, քանի որ այդ շինությունները հին են և 1988թ-ի երկրաշարժի հետևանքով մասամբ վնասվել են: Խոցելիությունը բարձրանում է նաև բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակասի պատճառով:

Համայնքում դիտվող քարաթափումները, սողանքները, սելավները, ուժեղ քամիները, առատ տեղումներն, կարկտահարություններն ու կայծակները խախտում են համայնքի բնականոն կյանքը և սպառնալիք են ներկայացնում միջհամայնքային և համայնքի ճանապարհների, բնակելի տների, շենք-շինությունների, էլեկտրահաղորդակցության, էլեկտրասարքավորումների համար: Միջհամայնքային ճանապարհների համար սպառնալիք ներկայացնող քարաթափումները և սողանքները դիտվում են գրեթե ամբողջ տարվա ընթացքում, սակայն առավել վտանգավոր են դառնում ձմեռ-գարուն ժամանակահատվածում: Գարնան և աշնան ժամանակահատվածում դիտվող առատ տեղումների հետևանքով համայնքի ճանապարհները դառնում են դժվարանցանելի, իսկ երբեմն հորդառատ տեղումների հետևանքով և համայնքի տեղադիրքի պատճառով առաջանում են սելավային հոսքեր: Ուժեղ քամիները հիմնականում վնասում են շենք-շինությունների տանիքները, դառնում են էլեկտրամատակարարման խափանման պատճառ: Էլեկտրամատակարարման խափանման, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների վնասման պատճառ են դառնում նաև կայծակները: Կայծակները կարող են դառնալ նաև մարդկային կորուստների պատճառ, ինչը անվտանգության կանոնները չպահպանելու հետևանք է:

Առողջապահական ոլորտում ձմռան ժամանակահատվածում սրվում են շնչառական և օդակաթիլային վարակները, քանի որ ցուրտ սեզոնին մարդիկ հավաքվում են ավելի փակ տարածքներում և ավելի սերտ շփման հետևանքով այդ հիվանդությունների փոխանցման հավանականությունը մեծանում է: Գարնան և աշնան ժամանակահատվածում դիտվող

աղիքային ինֆեկցիաները, որպես կանոն խմելու ջրի ցանցի հետ կապված խնդիրների հետևանք են:

	Համայնքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն հողագործությունը և անասնապահությունը: Սակայն համայնքում դիտվող բնածին երևույթները և այլ խնդիրները խոչընդոտում են ոլորտի զարգացմանը և կարող են դառնալ զգալի նյութական կորուստների պատճառ:
--	---

Անասնապահությունը համայնքի եկամտի հիմնական աղբյուրն է: Համայնքում դիտվող երևույթները /կարկտահարությունը, ցրտահարությունը, երաշտը, ուժեղ քամիները, առատ տեղումները, կայծակները/ խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը և երբեմն դառնում բերքի և անասնակերի մասնակի կամ լրիվ կորստի պատճառ:

Կարկուտի բացասական ազդեցությունը պայմանավորված է հակակարկտային միջոցների բացակայությամբ, երաշտինը՝ ոռոգման ցանցի: **Երաշտային** տարիներին դժվարանում է նաև անասունների համար խոտի **հայթայթումը** և մեծանում է անասունների շրջանում համաճարակների բռնկման հավանականությունը: Ցրտահարությունների բացասական հետևանքները անմիջական կապված են կանխատեսաման և ազդարարման մեխանիզմի **անկատարության** հետ, ինչի պատճառով բնակչությունը հնարավորություն չի ունենում ժամանակին կազմակերպելու ցրտահարության դեմ պայքարի միջոցառումներ: Կայծակները կարող են դառնալ անասունների կորստի պատճառ, ինչպես նաև սպառնալիք են ներկայացնում բնակչության համար:

Բնածին **վտանգներին** ավելացել են նաև վայրի գազանների, մկնանման կրծողների և միջատների հետ կապված վտանգները: Վայրի գազանները /գայլ, աղվես, շնագայլ/ վտանգ են ներկայացնում անասնապահության համար, հատկապես մանր եղջերավոր անասունների և ընտանի թռչունների: Չի կարելի բացառել նաև գայլերի հարձակումները մարդկանց վրա: Մկնանման կրծողները ակտիվանում են ձմռան ժամանակահատվածում, դառնալով պահեստավորված մսնդի վնասման պատճառ: Միջատները, որոնց քանակը վերջին տարիներին ավելացել է համատարած պայքարի բացակայության հետևանքով, մեծ վնաս են հասցնում բանջարաբուստանային ցանքերին, արոտավայրերին և խոտհարքներին:







Անասնապահության համար վտանգ են ներկայացնում նաև անասնահամաճարակները, որոնց բռնկման հավանականությունը դիտվում է ամբողջ տարվա ընթացքում:

Գարնան և աշնան ժամանակահատվածում դիտվող անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները հիմնականում մարդու անփութության, անզգուշության և խոզանների անվերահսկելի այրման հետևանք են: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները բացասական ազդեցություն են ունենում էկոհամակարգի վրա: Չոր կլիմայական պայմաններում անտառային հրդեհները կարող են ոչնչացնել անտառներ, խոտածածկ տարածքներ և համակողմանի ու հետևողական պայքար չկազմակերպելու դեպքում այն կարող է հանգեցնել էկոլոգիական աղետի:

1.5 Պատմական օրացույց

Պատմական օրացույցի օգնությամբ վեր հանվեցին բոլոր այն առանձնահատուկ երևույթներն ու դեպքերը, որոնք իրենց ազդեցությունն են թողել համայնքի կյանքի և զարգացման վրա: Հնարավորություն է ընձեռնել բացահայտել տարիների ընթացքում համայնքի զարգացման վրա ազդեցություն ունեցած դեպքերի պատճառահետևանքային կապը և հասկանալ համայնքի

զարգացման միտումները: Պատմական օրացույցը լրացվել է համայնքի բնակիչների հետ

Ժամանակահատված	Բնակչություն	Տոկոս/շինություն	Ծառ/անտառներ	Անասուններ/հողեր	Ինֆրակառուցվածք	Վտանգներ/արդյունքներ
1970						
1970-1980	 	 	 	 	 	 Երաշտ, ցրտահարություն, կարկտահարություն, կայծակ:
1980-1990	 	 	 	 	 	 Երկրաշարժ, կարկտահարություն
1990-2000	 	 	 	 	 	 Կարկտահարություն, երաշտ, քարաթափում
2000-2010		 		 	 	 Ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, անասնահամաճարակ,

միասին:

						քարայթափում
--	--	--	--	--	--	-------------

Լորուտի կաթնամանասնապահական սովետական տնտեսությունը զբաղվում էր նաև կարտոֆիլի ու ծխախոտի մշակությամբ: Խորհրդային տարիներին է ծավալվել հիմնական շինարարությունը, ներկրվել գյուղատնտեսական տեխնիկան, ապահովվել էլեկտրաէներգիայով, խմելու ջրով: Գյուղն ուներ դպրոց, ակումբ, գրադարան, կինո, բուժամբուլատորիա, մանկապարտեզ, հացի փուռ, բաղնիք, ճաշարան, արհեստանոց և այլն:

Խորհրդային տարիներին համայնքը չի **հասցրել** իրականացնել այն գործողություններն ու ծրագրերը, **որոնք կապահովեին** ավելի բարենպաստ պայմաններ գյուղի զարգացման և կենսամակարդակի բարձրացման համար:

Խորհրդային միության փլուզումը, երկրաշարժը, պատերազմը և տնտեսական ճգնաժամը իր բացասական **հետևանքներն են թողել** համայնքի ենթակառուցվածքի, շենք-շինությունների, գյուղատնտեսական տեխնիկայի, կենսական կարևոր համակարգերի վրա: **Նվազել են աշխատատեղերը, վատթարացել է սոցիալ-տնտեսական վիճակը, ավելացել է արտագաղթն ու արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:**

1990-ական թվականներին մեկնարկած սեփականաշնորման գործընթացը **հանդիսացել է** մասնակի խթան գյուղատնտեսության զարգացման համար: Գյուղում սկսել են զբաղվել հիմնականում անանսնապահությամբ: Վերջին տարիներին զարգացել է նաև մեղվաբուծությունը: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են հիմնականում տնամերձ տարածքներում:

Վերջին տաս տարիների ընթացքում համայնքի զարգացման համար մասնակի խթան են **հանդիսացել և իրենց ավանդն են ներդրել միջազգային ու տեղական կազմակերպությունները, անհատները, հիմնադրամները:**

Այս տարիներին **եղել են** որոշակի փոփոխություններ՝ կապված ինֆրակառուցվածքի շինարարության և վերանորոգման հետ, որոնք իրականացվել են պետական և միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների օժանդակությամբ: Դրական տեղաշարժերը երևում են ստորև բերված պատմական ուրվագծի աղյուսակից, որը համայնքի բնակիչների հիշողության մեջ տպավորված դեպքերի և համայնքի զարգացման վրա էական ազդեցություն ունեցած դեպքերի նկարագրությունն է:

Համայնքում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունների աղյուսակ

Տարի	Նկարագրություն
2010	Բուժկետի վերանորոգում: /«Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»/
	2 կամրջի կառուցում: /«Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»/
	Հուշարձանի զրուցատեղիի կառուցում: /«Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»/
2011	Ջրարբիացման համակարգի ստեղծում: /«Հեյֆեր» և «Համայնքապետարան»
	Ջրագծի վերանորոգում 3 կմ
2013	Դպրոցի մասնակի վերանորոգում /բարերար/

Ինչ վերաբերում է համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին. համայնքում մշտապես դիտվել են կարկտահարություն, ցրտահարություն, առատ տեղումներ: Սակայն վերջին տարիներին նկատվում է երաշտի, ուժեղ քամիների, կարկտահարության և ցրտահարության հաճախականության և ուժգնության աճ:

Բնածին **վտանգներին** գումարվել են նաև մկնանման կրծողների և միջատների հետ կապված վտանգները, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների շրջանում բռնկվող համաճարակների սպառնալիքը:

Դաշտավարության համար բավականին մեծ վտանգ են ներկայացնում մկնանման կրծողները որոնք քանակը կտրուկ ավելացել է: Պատճառը նրանում է, որ 25-30 տարի առաջ գյուղացիական տնտեսություններում ձեռնարկվում էին մկնանման կրծողների և միջատների դեմ պայքարի համալիր միջոցառումներ, որոնք հնարավորություն էին տալիս նվազեցնել դրանց քանակը: Այժմ մանկ միջոցառումների իրականացումը խաթարվել է, ինչն էլ հանգեցրել է մկնանման կրծողների և միջատների քանակի ավելացմանը:

Վերջին տարիներին մտահոգիչ են դարձել նաև վայրի գազանների հարձակումները: Հատկապես գայլերն ու աղվեսները ավելի հաճախ են սկսել հայտնվել համայնքի տարածքում: Վայրի գազանները սպառնալիք են ներկայացնում ոչ միայն գյուղատնտեսական կենդանիների, այլ նաև մարդկանց համար:

Ուրվագծի և պատմական օրացույցի **համադրումից** երևում է, որ

- ✓ Խորհրդային միության փլուզումը, երկրաշարժը և սոցիալ-տնտեսական ճգնաժամը իրենց բացասական հետևանքն են ունեցել համայնքի համար. նվազել է աշխատատեղերի քանակը, դիտվել է արտագաղթ, մեծացել է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Սակայն համայնքում դեռ մնացել է մարդկային ներուժ, ինչը լուրջ կարողություն է հանդիսանում համայնքի զարգացման համար,
- ✓ համայնքի բնակիչների կողմից անասնապահության, մեղվաբուծության և զբոսաշրջության զարգացման հնարավորությունները **հանդիսանում են** որպես բնակչության թվաքանակի չափավոր կարևոր հանգամանք,
- ✓ համայնքում հակակարկտային կայանի տեղադրումը, ոռոգման ցանցի հիմնումը, տարածաշրջանում վերամշակող արտադրամասերի և մթերման կետերի հիմնումը, խոտաբույսերի չորացման և փաթեթավորման հնարավորությունների **ընձեռումը**, կաթի սառնարանների հիմնումը, ինչպես նաև գազաֆիկացումը և ճանապարհների բարեկարգումը **կարող են հանդիսանալ լավ նախադրախնդրաշխատատեղերի ստեղծման, աղքատության նվազեցման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:**
- ✓ համայնքում հիմնական փոփոխությունները կապված են կառույցների և **ենթակառուցվածքների** վերանորոգման հետ:

Համայնքային խնդիրները լուծելու նպատակով տեղական իշխանությունն ակտիվորեն համագործակցում է պետական և միջազգային կազմակերպությունների հետ:


1.6 Զննարկումներ ֆոկլուս-խմբերում

Ֆոկլուս խմբերը ձևավորվել են համայնքի ղեկավարի և հիմնական դերակատարների աջակցությամբ: Ֆոկլուս խմբերում ներգրավվել են համայնքի գյուղատնտեսական և կրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Ֆոկլուս խմբից ստացված տեղեկատվությունը ասակարգվել է երեք հիմնական ուղղություններով՝ խոցելիություն, վտանգներ և կարողություններ:

	Խոցելիություն
Գյուղատնտեսական ոլորտ	Համայնքի գյուղացիական տնտեսությունները հակված են զբաղվելու հիմնականում անասնապահությամբ, քանի որ նշված ճյուղը ապահովում է առավել բարձր եկամտաբերություն: Բնակչության մեծ մասը ներգրավված է անասնապահությունում, հատկապես խոշոր եղջերավոր: Կաթը հիմնականում մշակվում է համայնքի ներսում՝ սեփական օգտագործման և մասամբ տարածաշրջանի շուկաներում վաճառքի համար: Ոլորտում առկա խնդիրները՝ բուժանյութերի պակասը և գները, խմոցների, արտավայրերի և խոտհարքների պակասը, սպառման շուկայի հետ կապված խնդիրները, վերամշակող արտադրամասերի բացակայությունը, ինչպես նաև վարկային և ապահովագրական համակարգի դժվար հասանելիությունն ու անկատարելիությունը, գյուղատնտեսական միջոցառումների, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքների պակասը գյուղատնտեսական ոլորտը բավականին խոցելի են դարձնում: Գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում և էապես կախված է բնակլիմայական պայմաններից: Հայաստանում կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացած ռիսկերը շարունակաբար մեծացնում են գյուղատնտեսական վնասները՝ վտանգի տակ դնելով համայնքի տնտեսական և սոցիալական բարեկեցությունը:
Կրթական	Համայնքի կրթական համակարգը ներառում է նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառը: Մանկապարտեզի շենքը մեկհարկանի է, ունի հիմքի ամրացման կարիք: Շենքի մի մասը գտնվում է Նորմալ վիճակում, իսկ մյուս մասը ունի վերանորոգման կարիք: Ունի խնդիրներ կապված ջրամատակարարման և սանհանգույցների հետ: Դպրոցի տեղակայման վայրը հետագուոված չէ: Ըստ տնօրինության՝ դպրոցն ունի խնդիրներ կապված սեյսմակայունության հետ: Դպրոցը ունի երեք մասնաշենք: Հիմնական եռահարկ մասնաշենքը մասմաբ վերանորոգվել է, տանիքը փոխարինվել է թիթեղյա ծածկով: Տարրականների մասնաշենքը, հանդիսությունների դահլիճը և սպարտդահլիճը ունեն վերանորոգման և տանիքի վերանորոգման կարիք, ինչի պատճառով գրեթե չեն շահագործվում: Դպրոցի շենքը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն աշակերտների հատուկ կարիքներին: Դպրոցում չկա բուժկետ: Ջուրը տրվում է ըստ գրաֆիկի: Ունի խնդիրներ կապված կոյուղու հետ: Չկա հալոցքաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ: Այս ամենը բարձրացնում է դպրոցի խոցելիությունը և վտանգի տակ է դնում անձնակազմի առողջական վիճակը: Խոցելիությունը բարձրանում է նաև աղետներին և արտակարգ իրավիճակներին դիմակայելու ունակությունների, գործիքների և մեխանիզմների բացակայության հետևանքով: Ըստ դպրոցի տնօրինության՝ առկա է տարիանման պլան, որը փակցված է նախաարհում, յուրաքանչյուր հարկում և յուրաքանչյուր դասասենյակում: Սակայն ուսուցիչների և աշակերտների պատասխանները տարիանման պլանի վերաբերյալ երևում են ստորև բերված գրաֆիկներում:

Ձեր դպրոցը ունի տարիանման պլան



աշխատակազմաշակերտներ

Դպրոցի աշխատակազմի և երեխաների պատասխանների պատկերից երևում է, որ անձնակազմի գերակշիռ մասը տեղեկացված չէն տարիանման պլանի վերաբերյալ, ինչը բարձրացնում է խոցելիությունը:

Հարկ է նշել, որ դպրոցում չկան փակցված նաև տարիանման ուղիները նշող ցուցանակներ, ինչպես նաև հրդեհի, երկրաշարժի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ գործելակերպի կանոնների վերաբերյալ հուշաթերթիկներ:

Դպրոցում երբևիցե չեն կազմակերպվել ԱՌՆ ուղղված դասընթացներ և միջոցառումներ:

Վտանգ

Գյուղատնտեսական ոլորտ

Անասնապահական ոլորտի համար վտանգ են ներկայացնում նաև համայնքին սպառնացող այնպիսի բնածին երևույթները, ինչպիսիք են երկարատև առատ տեղումները, երաշտը և կարկտահարությունը, որոնք դառնում են բերքի և անասնակերի մասնակի կամ լրիվ կորստի պատճառ: **Երբեմն երաշտը լուրջ խնդիրներ է առաջացնում անասնակերի հայթայթման առումով:** Սակավաջրության պատճառով գյուղատնտեսական կենդանիների շրջանում մեծանում է համաճարակների և հիվանդությունների բռնկման և տարածման ռիսկը: Այսամենը բերում է **անասնազիլաքանակի** կրճատման:

Անասնապահական ոլորտի, հատկապես մանր եղջերավոր անասնապահության, համար մտահոգիչ խնդիրներից է նաև վերջին տարիներին ակտիվացած գայլերի հարձակումները:

Կրթական ոլորտ

Ըստ դպրոցի տնօրինության դպրոցը ունի խնդիրներ սեյսմակայունության հետ: Սակայն տեղադիրքի վերաբերյալ որևիցե ուսումնասիրություն չի իրականացվել:

Բնածին երևույթներից դպրոցի համար առավել մեծ վտանգ են ներկայացնում սելավները, երկրաշարժերը, կարկտահարությունը, ուժեղ քամիները: Մարդածին բնույթի վտանգներից դպրոցի համար սպառնալիք են ներկայացնում հրդեհները և փլուզումները: Երբեմն առատ տեղումների և ինտենսիվ ձնհալի հետևանքով առաջացած սելավային հոսքերը՝ դպրոցի տեղադիրքի պատճառով լցվում են դպրոցի տարածք: Կարկտահարությունների և ուժեղ քամիների հետևանքով հիմնականում վնասվում է տանիքը: Երկրաշարժերը և հրդեհները առավել մեծ վտանգ են ներկայացնում դպրոցի աշխատակազմի և երեխաների համար, ինչը հիմնականում այդ երևույթներին դիմակայելու ունակությունների, գործիքների և մեխանիզմների բացակայության հետևանք է:

Դպրոցի շենքային պայմանների հետ կապված խնդիրները՝ սանհանգույցների և կոյուղու վիճակը, վտանգ են ներկայացնում աշխատակազմի և երեխաների

	առողջության համար: Դպրոցի տարածքում կա փլուզված շինություն /նախկինում ուսուցիչների կացարան/, որը վտանգ է ներկայացնում աշակերտների համար:
	Կարողություն
Գյուղատնտեսական ոլորտ	Անասնապահության զարգացման համար բարենպաստ կլիման, որոշակի գյուղատնտեսական, ոլորտում առկա ավանդույթները, գյուղատնտեսական մթերքի պահանջարկը լուրջ կարողություն են ոլորտի և համայնքի զարգացման համար:
Կրթական ոլորտ	Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2013թ-ին: Տակիքը թիթեղյա է: Դպրոցը զագաֆիկացված է: ՈՒՆԻ կոյուղի, լոկալ ջեռուցման համակարգ: Ձեռնուցումն իրականացվում է գազով: Բոլոր համակարգերը բավարար վիճակում են: Դպրոցում փակցված են արտակարգ իրավիճակների ժամանակ աշխատակազմի և աշակերտների հանձնարարականներն ու հրահանգները: Աղետներին արձագանքման գործիքներից առկա է տարահանման պլան, ինտերնետ և բջջային հեռախոսակապ: Ինֆորմացիոն աղբյուրներից հասանելի է ինտերնետը: Ազդարարման միջոցներից առկա է էլեկտրական զանգ: Հակահրդեհային պաշտպանության միջոցներից առկա են բահեր, կրակմարիչներ և ավազ: Կրակմարիչների պիտանելիությունը, ըստ տնօրինության, ստուգվում է երկու տարին 1 անգամ համապատասխան մարմինների կողմից: Երկու տարին մեկ անգամ կատարվում է նաև կրակմարիչների լիցքավորում: 2014 թ. Մենսենքինդերեն հիմնադրամի և հովանավորների աջակցությամբ գյուղի միջնակարգ դպրոցը ծեղք է բերել 40 մեղվափեթակ և նույնքան էլ մեղվաընտանիք: Ծրագրի նպատակն էր՝ աշակերտներին սովորեցնել մեղվապահություն, որը հետագայում կարող է դառնալ մասնագիտություն: Համայնքի բնակչության, ՏԻՄ-ի և դպրոցի անձնակազմի պատրաստակամությունը հնարավորինս աջակցելու դպրոցի հետ առնչվող խնդիրների լուծման գործընթացներին:

Ֆոկուսը ներառում է ընթացքում վեր հանած խնդիրները, մասնակիցների եզրակացմամբ, անմիջականորեն ազդում են համայնքի կենսամակարդակի և զարգացման վրա: Այդ խնդիրների լուծման դեպքում համայնքը կունենա դրական ձեռքբերումներ՝ աղքատության նվազում, եկամուտների բարձրացում, բերքատվության աճ, գյուղատնտեսության զարգացում, արտագաղթի նվազում և այլն: Այդ ամենը կնպաստի համայնքի զարգացմանը և բարգավաճմանը:

1.7 Կիսակառուցվածքային հարցազրույցներ

Հաշվի առնելով, որ հարցազրույցները հիմնված են յուրահատուկ գիտելիքների և փորձի վրա, կիսակառուցվածքային հարցազրույցները իրականացվեցին համայնքի գյուղապետի և ավագանու անդամների հետ: Դպրոցում իրականացված ուսումնասիրության ընթացքում կիսակառուցվածքային հարցազրույց անց է կացվել դպրոցի տնօրենի հետ:

Հարցազրույցների ընթացքում ստացված տեղեկությունը դասակարգվել է հետևյալ ուղղություններով:

1.7.1 Արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու համայնքի կարողությունները

Հարցազրույցների արդյունքում բացահայտվել են համայնքում առկա հետևյալ կարողությունները.

- ✓ տարահանման պլան

Որպես ԱԻ-ին դիմակայելու կարողություններն շվեդի նաև մարդկային ներուժը, դպրոցը, համայնքապետարանը, անտառները, աղբյուրները, գետը, որոշակի գյուղատնտեսական տեխնիկան և այլն:

Արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու դպրոցի կարողությունները

Դպրոցի տնօրենի հետ անցկացված հարցազրույցի ընթացքում բացահայտվել են դպրոցում առկա հետևյալ կարողությունները.

- ✓ տարահանման պլան,
- ✓ էլեկտրական զանգ,
- ✓ կրակմարիչներ, բախեր
- ✓ ստացիոնար և բջջային հեռախոսակապ,
- ✓ ինտերնետ

1.7.2 Համայնքում վերջին տարիներին տեղի ունեցած ԱԻ-ը և դրանց հետևանքները:

Համայնքում տեղի ունեցած բնական երևույթների և արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվությունը դասակարգվել է, որի արդյունքները պատկերված են աղյուսակում:

ՏԱՐԵԹԻՎ	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ	ԲԱՑԱՍՏԱԿԱՆ ԱՂԵՏՈՒԹՅՈՒՆ
1982	Զարթափում	Մահացել է 7 մարդ:
1988	Երկրաշարժ	Վնասվել են տներ, շինություններ:
2000, 2002	Երաշտ	Բերքի վնասում, խոտհարքների վնասում, անասնախոտի կորուստ:
2007, 2011, 2013	Աֆրիկյան ժանտախտ	Խոզերի գլխաքանակի անկում
Պարբերաբար	Առատ տեղումներ	Գերխոնավություն, սելավային հոսքերի առաջացում, շենքերի և տների, ճանապարհների վնասում, բերքի և անասնախոտի փոսում, գյուղատնտեսական աշխատանքների /խոտհնձի/ խափանում:
Պարբերաբար	Ուժեղ քամի	Ծառերի կտրում, տանիքների վնասում, էլեկտրամատակարարման խափանում
Պարբերաբար	Ցրտահարություն	Ցանքերի վնասում, բերքի կորուստ
Պարբերաբար	Կարկտահարություն	Բերքի, այգիների, տանիքների վնասում

Հարկ է նշել, որ շատ հաճախ վտանգավոր երևույթներից /կարկտահարություն, ցրտահարություններ, սելավից և այլն/ հասցված փոքր մասշտաբի վնասների մասին չի հաղորդվում, ուստի վերջիններս չեն գրանցվում նաև վիճակագրությունում

Հստ ստացված տեղեկությունների, դպրոցն արտակարգ իրավիճակի հետևանքով տուժել է ուժեղ քամիներից: Վնասվել է դպրոցի տանիքը:

1.8.2 անգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթի կներմիջոցով

Չանգվածային հարցմանը մասնակցել է համայնքի 50 բնակիչ, որի արդյունքում հավաքագրվեցին տեղեկություններ.

- ✓ համայնքին սպառնացող վտանգների,
- ✓ վտանգավոր երևույթների սեզոնայնության, հաճախականության,
- ✓ համայնքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակներից բնակչության կողմից կրած վնասների համանքի խոցելի տարրերի ու կարողությունների,
- ✓ ԱՌՆ ոլորտի հիմնական դերակատարների,
- ✓ արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվածության,
- ✓ իր ներուժը ԱՌՆ միջոցառումների պլանավորման և իրականացման գործում ներդնելու բնակչության պատրաստակամության,
- ✓ ԱՌՆ միջոցառումներին մասնակցության և շահագրգռվածության վերաբերյալ:

Դպրոցի ուսումնասիրության մասնակցել են 3 ուսուցիչ և 5 աշակերտ:

Ուսումնասիրությանն ապատակն էր պարզել արտակարգ իրավիճակներին՝

դպրոցի անձնակազմի աշակերտների պատրաստվածության աստիճանը,

աղետներին արձագանքման դպրոցի կարողությունները և իրազեկվածությունը համայնքին նդպրոցին սպառնացող վտանգների վերաբերյալ:

Չանգվածային հարցումներից հավաքագրված տեղեկությունները դասակարգվել են, որի արդյունքները բերված են ստորև:

1.8.1.3 ամայնքի սպառնացող հիմնական վտանգավոր երևույթներ

Հայաստանը գտնվում է բնական վտանգների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցությանը: Բնական վտանգների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երկրաշարժերից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից, ուժեղ քամիներից, երաշտներից և հրդեհներից:

Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Վերջին երեսուն տարվա ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերը վնաս են հասցրել մեծ թվով մարդկանց, ինչպես նաև հանգեցրել զգալի տնտեսական վնասների: Վերլուծությունները ցույց են տվել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունը աճել է:


Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85°C-ով և տեղումների նվազում 6-8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Բնածին վտանգավոր երևույթները և դրանց բացասական հետևանքները մեծ ազդեցություն ունեն մարդու բարեկեցության և տնտեսության զարգացման վրա:

Բնական վտանգավոր երևույթները ստեղծված են առաջացնում աղետներ, քանի որ եղանակներ չկան հասարակության խոցելիության հետ:

Կլիմայական այս երևույթների ուղղակի հետևանք է նաև եղանակային կտրուկ փոփոխությունների ավելացումը, որն ըստ բազմաթիվ հետազոտությունների, ռիսկի գործոն է ամենատարբեր ոլորտների համար՝ առողջապահություն, գյուղատնտեսություն, էներգետիկ և այլն:

Հարցման մասնակիցների բնածին վտանգավոր երևույթների վերաբերյալ պատասխանների պատկերը ներկայացված է գրաֆիկ 1-ում:




Գրաֆիկ 1. Բնական վտանգավոր երևույթների վերաբերյալ ստացված տեղեկություն

Բնածին երևույթներից առավել շատ են շեղումները, կարկտահարությունը և ցրտահարությունը, առատ տեղումները և երկրաշարժը: Նշվեցին նաև այլ երևույթներ՝ ուժեղ քամիներ, քարաթափություն, սելավ, սողանք և կայծակ: Հենց այս երևույթներն են դարձել համայնքի բնականոն կյանքի խաթարման և նյութական կորուստների պատճառ:

Դպրոցին սպառնացող բնածին վտանգավոր երևույթների վերաբերյալ դպրոցի ուսումնասիրության մասնակիցների պատասխանների պատկերը ներկայացված է գրաֆիկ 2-ում: **Բացի բնածին երևույթներից նշվեցին նաև հրդեհներն ու փլուզումները, որոնք կարող են սպառնալ դպրոցին:**

Հարկ է նշել, որ դպրոցի տարածքում կա կիսափլուզված շինություն:



Գրաֆիկ 2. Դպրոցին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներ

Շատ հաճախ բնածին վտանգների և վտանգավոր երևույթների ազդեցությունը հանգեցնում է մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների:

Յուրաքանչյուր բնածին վտանգավոր երևույթ՝ կախված տեսակից, բնույթից, մասշտաբից, թողնում է ամենատարբեր հետևանքներ, որոնց շրջանակները պայմանավորված են խոցող գործոններով՝ խոցման դաշտերով, տեղական պայմաններով, խոցելի տարրերով, որոնցից էլ վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների աճի միտումներ:

Չանգվածային հարցումից և կիսակառուցվածքային հարցազրույցներից ստացված տեղեկությունները դասակարգվել են ըստ առաջնայնության, որի արդյունքները բերված են աղյուսակում:

Համայնքի նսպառնացող հիմնական վտանգավոր երևույթների աղյուսակ

ԵՐԵՎՈՒՅԹ		ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
1	Երաշտ	Երաշտին ախապամաններից է, երբ մշակաբույսերի ինտենսիվ աճի շրջանում դիտվում է տեղումների սակավություն և չի իրականացվում արհեստական ոռոգում: Համայնքը չունի ոռոգման ցանց: Երաշտի ժամանակ զգալիորեն մեծանում է նաև մշակաբույսերի ոչնչացման վտանգը: Երաշտը սպառնում է նաև անասնապահական ոլորտին, երբ անսխաղեպ շոգի պատճառով արոտավայրերում և խոտհարքներում խոտի քանակը չի բավականացնում անասնակերի հարցը լուծելու համար: Երաշտային տարիներին, ջրի սակավության պատճառով մեծանում է վարակիչ հիվանդությունների հավանականությունը՝ թե՛ բնակչության շրջանում, թե՛ անասնապահական ոլորտում: Իսկ որոշ արոտավայրերում խմոցների բացակայության պատճառով նվազում է կաթնատվությունը:
2	Կարկտահարություն	Համայնքում հողագործության բնայգեգործության բզբաղվում են տնամերձ տարածքներում, հիմնականում սեփական օգտագործման համար: Միջին հաշվով՝ տարվա ընթացքում կարկտահարություն լինում է 6-8 անգամ, որոնցից 2-3-ը՝ համայնքի համար աղետալի հետևանքներով: Կարկտից պատճառված վնասները մեծ են, քանի որ մաշկվող բանջարեղենի (կարտոֆիլ, լոբի, կաղամբ, լոլիկ), մրգի ու հատապտուղի ծաղկման ու հասունացման

		շրջանը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ: Խոշորչափիկարկուտըվտանգէներկայացնումնաւընտանիքոչուների համար: Երբեմնկարկուտիհետևանքովդժվարանումէանասնակերիհավաքմանգործընթացը: Հարկ է նշել, որ կարկտահարության հետևանքով վնասվում են նաև շենք-շինությունների տանիքները, լուսամուտները, տրանսպորտային միջոցները:
3	Ցրտահարություն	Ցրտահարություններիհետևանքովբնակչությունըկրումէկյուրականվնասներ: Վերջին տարիներին դիտվում են ցրտահարման դեպքերի հաճախացում թե՛ գարնան թեաշնան ժամանակահատվածում: Հիմնականում ցրտահարությունը վնասում է մրգի, պտղի և բանջարաբուստանային մշակաբույսերի բերքը:
4	Առատ տեղումներ	Համայնքին բնորոշ են առատ տեղումները ձյան և անձրևի տեսքով: Վերջին տարիներին ավելացել են նաև կարկուտի դեպքերը: Առատ տեղումները դառնում են սելավային հոսքերի առաջացման,քարաթափումների ակտիվացման պատճառ, ինչպես նաև խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը: Առատ տեղումների հետևանքով համայնքի ճանապարհները դառնում են դժվարանցանելի:
5	Երկրաշարժ	Երկրաշարժը անկանխատեսելի երևույթ է և սպառնում է Հայաստանիամբողջ տարածքին:Համայնքի շենքերի և շինությունների վիճակի պատճառով երկրաշարժը կարող է դառնալ կյուրական և մարդկային կորուստների պատճառ:Կարող է դառնալ նաև համայնքին բնորոշ այլ երևույթների (սողանք,քարաթափում) և արտակարգ իրավիճակների (պայթյուն, հրդեհ) պատճառ:
6	Ուժեղ քամի	Քամիները բնորոշ են տարածաշրջանին: Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքի տներին ու շենք-շինություններին, էլեկտրահաղորդակցման համակարգին: Քամիները մեծ վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական ոլորտին, դառնալով մրգատու ծառերի կոտորման, բերքի թափման պատճառ:
7	Քարաթափում	Քարաթափումները դիտվում են միջհամայնքային ճանապարհի վրա: Դրանք սպառնալիք ենտրանսպորտային միջոցների և մարդկանց համար: Քարաթափումների հետևանքով հնարավոր են նաև ճանապարհների խցանումներ
8	Սելավ	Համայնքի տեղադիրքի, սելավատարների ու հեղեղատարների բացակայության պատճառով՝ ձնհալի ու առատ տեղումների հետևանքով առաջացած սելավային հոսքերը ողողում են ներհամայնքային ճանապարհները, ցանքատարածքները, լցվում տնամերձ տարածքները:
9	Սողանք	Համայնքում առկա սողանքային տեղամասերը սպառնալիք են ճանապարհների և խոտհարքների համար: Սողանքային երևույթների ակտիվացմանը նպաստում են առատ տեղումները:
10	Կայծակ	Համայնքում կայծակներ միշտ էլ դիտվել են: Կայծակը բավականին լուրջ վնասներ է հասցնում բնակչությանը, դառնալով էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Հարկ է նշել, որ կայծակները սպառնալիք են նաև գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց համար, ինչը վարքականոսների չպահպանելու հետևանք է:

Բացիբնածիներևույթներիցնշվեցինսաւայլերևույթներ, որոնքսպառնալիքեն ներկայացնում համայնքիհամար: Դրանք են՝ անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները, անասնահամաճարակները, վայրի գազանների, մկնամման կրծողների և միջատներիհետ կապված վտանգները:

Մկնանման կրծողները, թրթուռները և միջատները, որոնք ավելացել և ակտիվացել են վերջին տարիներին, մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը, վնասելով բանջարաբուստանային ցանքերը, խոտհարքներն ու արոտները:

Վայրիզազաններին ներխուժումները դարձել են ավելի հաճախակի, ինչը մտահոգության պատճառ է բնակչությանը և շրջանում:
Չեն բացառվում զազանների հարձակումները նաև բնակիչների վրա:

Համայնքի անասնապահական ոլորտի համար վտանգ են ներկայացնում վերջին տարիներին ավելացած գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունները, ինչը հիմնականում կանխարգելիչ միջոցառումների բացակայության հետևանք է: Վարակիչ և զանգվածային բնույթ կրող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը անասնաբուժության հիմնական ու կարևորագույն խնդիրներից է: Համաձայն վիճակագրական տվյալների, **յուրաքանչյուր** վարակիչ հիվանդություն **ավելի** մեծ վնաս է հասցնում անասնապահությանը, քան տասն ոչ վարակիչ **հիվանդություններ**: Ուստի, վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ունի մեծ նշանակություն անասնաբուժության համար, քանի որ այն համայնքի եկամտի **հիմնական** աղբյուրն է:

Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները պայմանավորված են մարդկային գործոնով: Դրանք, որպես կանոն, մարդկանց անզգուշության և անփութության հետևանք են: Շատ հաճախ հրդեհները բռնկվում են, երբ մարդիկ միտումնավոր այրում են խոզանները: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները բացասական ներգործություն են ունենում շրջակա միջավայրի վրա: Կլիմայի փոփոխության պայմաններում անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները էկոհամակարգի համար դառնում են ամենաանմիջական և խոշոր սպառնալիքները:

Որպես մարդածին բնույթի վտանգ նշվեցին ավտովթարները, կենցաղային հրդեհները, (հատկապես պահեստավորված **անասնախոտի**), պայթյունները, շենքերի, **շինությունների փլուզումները**: Համայնքի համար **հատկապես մտահոգիչ** են բնակելի տների ֆիզիկական վիճակը, քանի որ նրանք հին են, ինչպես նաև մասամբ վնասվել են 1988թ-ի երկրաշարժի հետևանքով:


1.8.2 Վտանգավոր երևույթների սեզոնայնություն

Տարածաշրջանի կլիմայի կարևոր առանձնահատկությունը եղանակային պայմանների արտահայտված տատանումներն են ինչպես **տարեցտարի**, այնպես էլ տարվա ընթացքում:

Սեզոնայնության ուսումնասիրությունը ի հայտ է բերում համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին բնորոշ ժամանակահատվածները, ինչը հնարավորություն է տալիս՝ անդրադառնալով անցյալին, բացահայտել երևույթների հետ կատարվող փոփոխությունները և միտումները:

Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85°C-ով և տեղումների նվազում 6-8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Լորրուտ համայնքում առավել հաճախ դիտվող վտանգավոր երևույթների սեզոնայնության վերաբերյալ պատկերը բերված է Գրաֆիկ 3-ում:



Պրաֆիկ 3. Բնածին վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Այդ ժամանակահատվածում դիտվող երևույթները առկա են կոորդինատների պատճառով, զուգահեռ տեսական ուղիով, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

Հարկ է նշել նաև, որ ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Այդ ժամանակահատվածում դիտվող երևույթները առկա են կոորդինատների պատճառով, զուգահեռ տեսական ուղիով, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

Դիտվող երևույթները սպառնալիք են ներկայացնում միայն տեսական ուղիով, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

Սակայն սեզոնային տատանումները լուրջ անվտանգության ռիսկներ են ներկայացնում միայն տեսական ուղիով, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

Սեզոնային տատանումներն առավելակառուցված չեն, այլ միայն տեսական ուղիով, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը: Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

Սեզոնային վտանգավոր երևույթների սեզոնային վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների հիմնական տվյալները, որի ամսյալը բնակչության տեսակետից համայնքի նստավայրում առկա է, ցուցաբերում է հետևյալը:

1.8.3 Վտանգավոր երևույթների հաճախականությունը


Հայաստանը գտնվում է բնական վտանգների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցությանը: Աշխարհում հայտնի բնական վտանգներից Հայաստանին հատուկ են շուրջ 110 տեսակի վտանգներ: Հայաստանից բնակիչների ավելի քան 80% ենթարկվում է աղետալի իրադարձությունների փաստացի ռիսկերի¹:

Կլիմայի փոփոխության ազդեցություններն այսօր զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Վերլուծությունները ցույց են տվել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունը աճել է:

Վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախակի են դարձել հատկապես հիդրոոգեոլոգաբանական բնույթի երևույթները: Այդ մասին են վկայում նաև պաշտոնական տվյալներն («Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային հաղորդագրություն», Հայաստան, 2010թ) առ այն, որ վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոոգեոլոգաբանական վտանգավոր երևույթների (ՀՎԵ) աճի միտումներ: Վերջին 30 տարվա ընթացքում ՀՎԵ դեպքերի գումարային քանակն աճել է 1.2 դեպքով, իսկ վերջին 20 տարում տարեկան 1.8 դեպքով:

Լորրուտ համայնքում վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրությունից երևում է, որ հաճախակի են դարձել հատկապես վտանգավոր օդերևույթաբանական բնույթի երևույթները:

Բնակչության շրջանում վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ ևս տացված տեղեկությունների պատկերը երևում է ստորև բերված գրաֆիկից:



Գրաֆիկ 4. Բնածին վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ բնակչությունից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրության վերլուծությունը ցույց տվեց, որ համայնքի բնակչության տեսակետից համայնքը տարին առնվազն երկու անգամ ենթարկվում է սպառնացող բնածին երևույթների բացասական ազդեցությանը:

¹ՄԱԿ-ի Հարգացման ծրագրի (2004թ.) Բնական աղետների ռիսկերի նվազեցման զեկույց

Քննարկումների և հարցման ընթացքում պարզ դարձավ, որ բնակչության մեծ մասը ավելի շատ ուշադրություն է դարձնում և վտանգավոր է համարում այն բնածին երևույթները, որոնք դարձել են կամ կարող են դառնալ նյութական կորուստների կենսականոնությանը խնայող ռիսկերից: Այդ երևույթներից հատկապես առանձնացվեցին կարկտահարությունը, երաշտը, ցրտահարությունը և այլն:

Վերջին տարիներին եղանակային փոփոխությունները դարձել են ակնհայտ:

Այդ փոփոխությունները ուղեկցվում են բնական **երևույթներից** աղետների հաճախականության ավելացմամբ:

Եղանակային փոփոխությունները լրջորեն ազդում են բուսական և կենդանական աշխարհի վրա:


Այն առավել լայն տարածում է գտնում:

գյուղատնտեսության մշակույթի վարման գործընթացների վրա:

Այդ երևույթները և մարդկային գործոնով պայմանավորված խոչընդոտները բացասական ազդեցություն են ունենում մշակաբույսերի բերքատվության, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության վրա:

1.8.4 Համայնքում տեղի ունեցած արտակարգ դեպքերից բնակչության կրած վնասները

Հարցման մասնակիցների 42%-ը անմիջական վնաս է կրել համայնքում տեղի ունեցած փոքրամասշտաբ աղետներից և արտակարգ իրավիճակներից: Վերջիններիս հետևանքով մասկանում ուժեղ գյուղատնտեսական ոլորտը (57%), վնասվել են բնակելի տները (29%), եղած կորուստները և վնասները նյութական են:



Պատկեր 5. Աղետների և արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչության կրած վնասների վերաբերյալ բնակչության կողմից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Նշվեցին նաև, որ շատ հաճախ փոքր մասշտաբի վտանգավոր երևույթներից հասցված վնասների մասին չի հաղորդվում, ուստի վերջիններս չեն գրանցվում նաև պաշտոնական վիճակագրությունում: Ըստ բնակիչների՝ թերի են կամ բացակայում են նաև հատուկ ուղղվածության մասնագիտացված տեղեկատվության և կանխատեսումների պատրաստման և տարածման մեխանիզմները: Հարցման ընթացքում պարզվել է նաև, որ համայնքային մակարդակում բացակայում է սպառնացող վտանգի մասին ազդարարման համակարգը:


1.8.5 Վտանգների խոցելիության համադրությունը

Յուրաքանչյուր վտանգի առումով առկա են կոնկրետ տարածքին բնորոշ խոցելիություններ, որոնք կախված են բնակչության, մարդկային, համայնքներից կամ հատուկներից: **խոցելիությունը հետևանք է** ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և քաղաքական-ինստիտուցիոնալ խոցելիությունների:

Ստորև բերված գրաֆիկներում, թե բնակչության կարծիքով, ինչպիսի վտանգավոր երևույթներն են իրական սպառնալիք հանդիսանում Լորուտ համայնքի կենսական կարևոր

համակարգերի, ինֆրակառուցվածքների, շինությունների
գյուղ. նշանակության օբյեկտների համար:


և



Պատկեր 6. Բնական վտանգներից համայնքի խոցելի տարրերի վերաբերյալ բնակչությունից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Ստացված պատկերից կարելի է եզրակացնել, որ համայնքի բնորոշ բնածին վտանգավոր երևույթներից առավել խոցելի են ցանքատարածքները, բնակելի տները, միջհամայնքային ճանապարհները և գյուղը:

Համայնքի խոցելի շինությունների վերաբերյալ հարցման մասնակիցների պատասխանների պատկերները նույն գրաֆիկից:




Պատկեր 7. Համայնքի խոցելի շինությունների վերաբերյալ բնակչությունից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Ըստ հարցման արդյունքների, արտակարգ իրավիճակների նկատմամբ, որպես առավել խոցելի, նշվել են բնակելի տները, քանի որ դրանք հին են և մասամբ վնասվել են 1988թ-ի երկրաշարժի հետևանքով: Համայնքապետարանը վթարային են նշվել որպես հին շինություն: Դպրոցը և մանկապարտեզը խոցելի են նշվել որպես մարդկային մեծ կուտակման օբյեկտներ:

Դպրոցը համայնքի մարդկային մեծ կուտակումներով օբյեկտ է:
Այս տեղեր են խանութի մեծ զանգված և ցեղացիների կյանքի /9-12 տարի/ նժամանակի /օրվա 6-8 ժամ/
զգալի մասը: Հետևաբար, դպրոցի կարևոր խնդիրներն են զբաղվել համայնքի խոցելի շինությունների և շինարարական ապահովումը

Համայնքի խոցելիության աստիճանը բարձրանում է նաև արտակարգ իրավիճակների վերաբերյալ գիտելիքների պակասի և վարքական ունենքի մացության հետևանքով:

Հաջորդ գրաֆիկը ցույց է տալիս ԱԻ-ին նկատմամբ մարդկանց առավել խոցելի միավորները:




Գրաֆիկ 8.

Համայնքի խոցելի միավորները վերաբերյալ նաև կշռվում է խոցելիությունների գրաֆիկական պատկերը

Գրաֆիկը ցերեկում է, որովայնի համայնքում առավել խոցելի խումբ են համարվել երեխաները: Հարցման ժամանակ նշվել է, որ գրաֆիկում ներառված բոլոր խոցելիության աստիճանը կնվազի կամ կաճի՝ կախված վերջինների սառնոցական վիճակից, իրազեկվածության մակարդակի փոփոխությունից:

Արտակարգ իրավիճակների աղետների սպառնալիքի դեպքում կարող են առաջանալ գործոններ, որոնց ազդեցությունը վտանգավոր է երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող, կյանքին առողջության համար: Յուրաքանչյուր դպրոցի անձնակազմն ու այնտեղ սովորող երեխաները պետք է գիտակցեն իրենց կյանքին սպառնացող վտանգները և պատրաստ լինեն համապատասխան քայլեր ձեռնարկել վերահաս և փաստացի վտանգի դեպքում: Ուստի, շատ կարևոր է, որ նման իրավիճակներում թե դպրոցի անձնակազմը, թե աշակերտները և թե ծնողները կարողանան ճիշտ գործել. իրականացնել տարահանում, ցուցաբերել առաջին օգնություն և հոգեբանական աջակցություն:

Ուսումնասիրվել է նաև տարբեր ծառայությունների հասանելիության աստիճանը:



Գրաֆիկ 9. Համայնքի ծառայությունների հասանելիության վերաբերյալ բնակիչներից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Հարցվողները ծառայությունների հասանելիության աստիճանը կապում էին համայնքի տեղադիրքի, հեռավորության, ֆինանսական խնդիրների և ենթակառուցվածքների վիճակի հետ:

Հարկ է նշել, որ հատուկ ծառայությունների ավտոմեքենաների մոտեցման համար ազատ են դպրոցամերձ ուղիները:

1.8.6 Աղետների խիմակայելու վերաբերյալ համայնքի բնակչության գիտելիքները

Համայնքի պաշտպանության համար **կենսական** կարևոր գործոն է աղետներին դիմակայելու և արձագանքելու տեղական կարողությունը, որն արտահայտվում է տեղում առկա արձագանքման գործիքներով և մեխանիզմներով, տեխնիկական միջոցներով և բնակչության պատրաստվածության մակարդակով:


Հարցազրույցների և հարցման ընթացքում պարզվեց, որ բնակչության և տեղական իշխանության շրջանում կա համայնքում առկա կարողությունների կիրառման և շահագործման վերաբերյալ գիտելիքների պակաս:

Համայնքը առաջինն է առնչվում աղետներին: Նմանատիպ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու **արդյունավետությունը** կախված է բնակչության և տեղական իշխանության գիտելիքների և հմտությունների մակարդակից: Բնակչության շրջանում գիտելիքների ու հմտությունների պակասը էական ազդեցություն ունի համայնքի խոցելիության մակարդակի վրա: Աղետներին դիմակայելու և արձագանքելու **պատրաստվածության** մակարդակը պարզելու նպատակով՝ ուսումնասիրվեց համայնքի բնակչության ինքնազնադատական աղետներին պատրաստվածության

վերաբերյալ: Նախապատրաստումը սկսվում է տեղեկատվությունից և այն տրամադրելու ինտարակտիվություններից ու ծնունդներից: Հարկ է նշել,

որ տեղեկատվության տրամադրման հիմնական միջոցներից՝

հանրային հեռուստատեսությունը, հասանելի է համայնքին: Տեղեկատվական աղբյուրների հասանելիությունը երևում է գրաֆիկից:



Գրաֆիկ 10. Համայնքի ծառայությունների հասանելիության վերաբերյալ բնակչությունից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Հարցվածների գերակշիռ մասը նշել է, որ միանգամից օգտվում է տեղեկատվության մի քանի աղբյուրներից: Տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը հանրային **հեռուստատեսությունն** է: Արբանյակային հեռուստատեսությունը նույնպես տեղեկատվություն **ստանալու աղբյուրներից** է: Ինտերնետը որպես տեղեկատվական աղբյուր


Տեղեկատվական աղբյուրներից դպրոցին հասանելի են հանրային հեռուստատեսությունը և ինտերնետը:

ավելի հասանելի է դարձել:

Բնակչության՝ աղետներին նախապատրաստվածության և դիմակայելու կարողություններից էկաիված աղետներին արձագանքման տեղական մակարդակը: Ըստ գյուղապետի տրամադրած տեղեկատվության՝ ՏԻՄ ներկայացուցիչները 2015թ.-ին մասնակցել են ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից Աղվերանում կազմակերպված ԱՌՆ դասընթացներին:

Արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության **գիտելիքներին և հմտություններին վերաբերյալ** ինքնազնահատականի պատկերը երևում է գրաֆիկից:

Ըստ դպրոցի աշխատակազմի և աշակերտների, իրենց համար երբևիցե չեն կազմակերպվել աղետներին և արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու, արձագանքելու և դիմակայելու հատուկ դասընթացներ:




Գրաֆիկ 11. Արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության **գիտելիքներին և հմտություններին վերաբերյալ բնակչության ինքնազնահատականի գրաֆիկական պատկերը**

Ըստ գրաֆիկի արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ գիտելիքներին և **հմտություններին** ճանոթ են հարցվողների 44%-ը, իսկ մասամբ ճանոթ են՝ 22%-ը: Հարցվողների 34%-ը չունեն որևիցե գիտելիք արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ, ինչը բարձրացնում է համայնքի խոցելիության աստիճանը:


Դպրոցի աշխատակազմի և աշակերտների՝ արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության գիտելիքի և հմտությունների վերաբերյալ ինքնագնահատականի պատկերը երևում է գրաֆիկներից: Գրաֆիկներից երևում է, որ դպրոցի անձնակազմի և աշակերտների գերակշիռ մասը չունեն համապատասխան գիտելիք և հմտություններ արտակարգ իրավիճակներում գործելակերպի, հակահրդեհային պաշտպանության և առաջին օգնության վերաբերյալ, ինչը բարձրացնում է խոցելիությունը:

Առաջին օգնության հիմունքներ




Աշխատակազմ Աշակերտներ

Հակահրդեհային անվտանգության կանոններ



Աշխատակազմ Աշակերտներ

Արտակարգ իրավիճակների ժամանակ վարքականոններ




Աշխատակազմ Աշակերտներ


Գրաֆիկ 11. Դպրոցի աշխատակազմի և աշակերտների՝ արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության գիտելիքի և հմտությունների վերաբերյալ ինքնագնահատականի վերաբերյալ

Համայնքի բնակչությանն տեղական իշխանության ԱԻ-ին դիմակայելու և արձագանքելու պատրաստի լինելու վերաբերյալ հարցվողների կարծիքը արտացոլված է ստորև բերված գրաֆիկներում:


Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում տեղական իշխանությունը պատրաստ արձագանքել ԱԻ-ն



Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում համայնքի բնակչությունը պատրաստ է արձագանքել ԱԻ-ն



Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում ուղե պատրաստեք արձագանքել ԱԻ-ն



Գրաֆիկ 12.

Կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչության հոգեբանական պատրաստվածությունը բավարար մակարդակի է:

Դպրոցի անձնակազմի և աշակերտների՝ հնարավոր արտակարգ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության ինքնագնահատականը երևում է ստորև բերված գրաֆիկներից:

Աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում ձեր դպրոցի անձնակազմը պարզապես ոչ ոչ դիմակայելու արձագանքելու:



Աշխատակազմ Աշակերտներ

Աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում ձեր դպրոցի աշակերտները պարզապես ոչ ոչ դիմակայելու արձագանքելու:



Աշխատակազմ Աշակերտներ

Գրաֆիկ 13. Դպրոցի անձնակազմի և աշակերտների՝ հնարավոր արտակարգ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության ինքնագնահատականը

Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում առաջանում են գործոններ, որոնց ազդեցությունը կարող է վտանգավոր լինել կյանքի և առողջության համար:

Մարդու գոյատևելու և անվտանգությունը պայմանավորված է հոգեբանական պատրաստվածության և սեփական անվտանգության կանոնների մագուղյալ մակարդակից:

Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատվություն է կրում ուղղադրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության համար:


Արտակարգ իրավիճակներին արձագանքման ոլորտում գործող շահագրգիռ կողմերի վերաբերյալ բնակչության իմացության ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետներին արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության, ուսուցում անցած կամավորների, փրկարար ծառայության, մարդասիրական կազմակերպությունների, **սոցիալական համակարգի** և ՀՀ կառավարության մասնակցությունը:

Հստակեցված ովկարողեականություն

ցուցաբերելաղետիցանմիջապեսհետո՝ միջինիմականուժերիծա մանուկը:

Հստակեցված

որկառույցներըկարողենեականդերիաղալաղետիդ եպլում



Գրաֆիկ 14


Աղետի դեպքում հիմնական դերակատարներին վերաբերվող ստացված արդյունքները պայմանավորված են երկու հանգամանքով. վերջին տարիներին տեղի ունեցած արտակարգ իրավիճակների պատճառած տնտեսական վնասներով, կորուստներով և վերոհիշյալ շահագրգիռ կողմերի արձագանքման աստիճանով, որ կառույցներից է համայնքի բնակչությունը աջակցություն ակնկալում հետագայում:

Դպրոցի անձնակազմի և աշակերտների շրջանում իրականացված ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետներին արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության, կրթության նախարարության և փրկարար ծառայության մասնակցությունը:

Փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվածության հանգամանքը պայմանավորված է բնակչության պատրաստակամությունից՝ կամավոր ներգրավվելու տարբեր ծրագրերում՝ ուղղված աղետներին նախապատրաստվելուն, կանխարգելմանը և արձագանքմանը: Աղետներին նախապատրաստվելն ու կանխարգելումը ներառում են աղետից առաջ, աղետի ժամանակ և աղետից հետո մի շարք գործընթացներ: Այդպիսի ծրագրերը ներառում են գործողություններ, որոնցից կշահի ողջ համայնքը, այդ թվում՝ երեխաները: Բնակչության կողմից արտահայտված կամավորության պատրաստակամությունն առավելություն է, որը պետք է հաշվի առնվի և կիրառվի:

Հարցման մասնակիցների 42% պատրաստակամություն հայտնեցին կամավոր մասնակցել աղետների հետ կապված նախապատրաստական, կանխարգելման և արձագանքման

աշխատանքներին: Ստորև բերված գրաֆիկն արտացոլում է հարցվողների պատասխանները ԱԻ-ից առաջ կամ հետո իրականացվող աշխատանքներին մասնակցության վերաբերյալ:



Գրաֆիկ 14.

Աղետից առաջ կամ հետո իրականացվող աշխատանքներին կամ ավորման մասնակցության պատրաստակամության վերաբերյալ բնակչության իրականացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը

Աղետներին դիմակայմանն ուղղված՝ համայնքի բնակիչների կողմից ձեռնարկվելիք անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բնակչությունը ամենաառաջնային քայլերն է համարում՝

- աղետների դեպքում հասարակական աշխատանքներին մասնակցումը
- աղետներին նախապատրաստման և կանխարգելման աշխատանքների իրականացումը
- տուժածներին սննդով և կացարանով ապահովումը,
- ունեցվածքի փրկումը:

Կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչության հոգեբանական պատրաստվածությունը բավարար մակարդակի է, սակայն աղետներին արձագանքելու և դիմակայելու համար անհրաժեշտություն կա բարձրագույն պատրաստվածության մակարդակը:

Հարկ է նշել, որ հարցման մասնակցած բոլոր աշակերտները և աշխատակազմի 62%-ը ցանկություն հայտնեցին մասնակցելու հատուկ դասընթացների և վարժանքների՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու սեփական կարողությունները բարձրացնելու համար:

Իսկ դպրոցում տարահանման և ազդարարման պլանների, կապի և ազդարարման միջոցների առկայությունը, դպրոցի անձնակազմի պարտականությունների ճիշտ բաշխումը և իմացությունը, գործնական պարապմունքների և ուսումնական տարահանումների անցկացումը նպաստում են երեխաների մոտ ծայրահեղ իրավիճակներին արագ արձագանքելու ունակությունների զարգացմանը և մտքի ու գործողությունների ավտոմատիզմի ձևավորմանը:

Ամփոփելով արդյունքները կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչությունը գիտակցում է, որ ներգրավվելով նախապատրաստման և կանխարգելման գործողություններում, կարելի է նվազեցնել աղետի ազդեցությունը, որն ուղղակիորեն ազդում է համայնքի կայուն զարգացման գործընթացի վրա: Ավստրիայից է, որ յուրաքանչյուր համայնք ունի մարդկային և տեխնիկական ռեսուրսներ, ուստի որոշ խնդիրներ կարող են լուծվել սեփական ուժերով: Այդպիսի գործողություններից կշահի հոգալիք համայնքը:

2. ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Աղետների ռիսկի նվազեցման երեխաներին նվիրված հոշակագիրը շեշտում է.

- դպրոցները պետք է լինեն անվտանգ և կրթությունը պետք է ընթանա առանց ընդհատումների,
- երեխաների պաշտպանությունը պետք է լինի առաջնային խնդիր աղետից առաջ, աղետի ժամանակ և հետո,
- երեխաներն ունեն մասնակցության և իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու իրավունք,
- համայնքների ենթակառուցվածքները պետք է լինեն ապահով, և մարդասիրական օգնությունը և վերականգնումը պետք է օգնեն՝ նվազեցնելու ապագա ռիսկերը,
- աղետների ռիսկի նվազեցումը պետք է հասանելի լինի ամենախոցելի խմբերին:

2.1 Եզրակացություններ և առաջարկություններ

ԱՌՆ արդյունքները ամփոփող ժողովրդական վարկած եզրակացություն համայնքի թույլ և ուժեղ կողմերի, համայնքի հնարավորությունների և առկա կամ հնարավոր խոչընդոտների, ինչպես նաև կլիմայական փոփոխություններով պայմանավորված և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված նպաստավոր նախագծերի վերաբերյալ:

Ավնհայտ է, որ բնակիչները նախապատվությունը տալիս են տնտեսական խնդիրների հրատապ լուծմանը, իսկ ԱՌՆ նախագծերը կարևորում են, եթե վերջինները անմիջականորեն նպաստավոր են հաղթահարելու առկա վտանգները՝ լինեն կլիմայի փոփոխության, թե բնական վտանգավոր երևույթների հետ կապված: Ինչ վերաբերում է կլիմայի փոփոխություններով պայմանավորված և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված երկարաժամկետ նախագծերին, որոնք տեղ պետք է գտնեն համայնքի զարգացման պլաններում, բնակիչների կարծիքով, համայնքի ուժից վեր է նման նախագծերի իրականացումը, քանի որ դրանք պահանջում են ֆինանսական, մասնագիտական և այլ անհրաժեշտ ներդրումներ, սակայն համայնքը չունի նման կարողություններ: Որպես նման նախագծերի իրականացնողի՝ համայնքը նշել է ՀՀ կառավարությանը:

Այնուամենայնիվ, համայնքն իրեն համարում է աղետների ռիսկի նվազեցման գործընթացի հիմնական դերակատարներից մեկը և պատրաստ է ներդնել իր ներդրումը կլիմայի փոփոխություններով պայմանավորված աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված նախագծերի իրականացման համար իր ունեցած հնարավորությունների չափով:

Ինչ վերաբերում է ԱՌՆ ոլորտին առնչվող համայնքի հնարավորություններին Հայաստանում տեղի ունեցող մի շարք զարգացումների տեսանկյունից, ապա համայնքը հստակորեն չի պատկերացում իր հնարավորությունների իրական ներդրման դաշտը: Մասնավորապես, հաշվի առնելով, որ թեև ուշադրության կենտրոնում են գտնվում համայնքների կարողությունների հզորացմանն ու աղետակայունության բարձրացմանն ուղղված գործընթացները, սակայն դրանք առայժմ «շոշափելի» չեն համայնքի համար: Համայնքն ունի ԱՌՆ դաշտի և այնտեղ տեղի ունեցող ինստիտուցիոնալ և իրավական զարգացումների հետ կապված տեղեկատվական բաց, հատկապես դրանց տեղայնացման, ինչպես նաև իր հնարավորությունների տեսանկյունից:

2.2 Համայնքի ուժեղ կողմերը

- բնակլիմայական բարենպաստ պայմաններ անսապահության և մեղվապահության զարգացման համար,
- գյուղատնտեսական արտադրանքի մեծ պահանջարկ,
- տեղեկատվական աղբյուրների հասանելիություն,
- տրանսպորտային միջոցների առկայություն,
- մարդկային ներուժի առկայություն,
- Մարցգետի առկայություն,
- բուժկետի առկայություն,
- մթերային խանութների առկայություն,
- համայնքապետարանի առկայություն,
- պատմամշակութային կոթողների առկայություն,
- անտառի առկայություն,
- դպրոցի առկայություն,
- մանկապարտեզի առկայություն,
- գազաֆիկացված լինելը,
- բնական աղբյուրների առկայություն,
- պտղատու ծառերի առկայություն,
- դեղաբույսերի առկայություն,
- հատապտուղների առկայություն,
- խոշոր և մանր եղջերավոր անասունների, ձիերի և թռչունների առկայություն,
- մեղվաբնտանիքների առկայություն,
- համայնքի ղեկավարությունը գիտակցում է ԱՌՆ միջոցառումների կարևորությունը և պատրաստակամ է ներառել տեղական զարգացման պլաններում (ըստ զարգացման ոլորտների):

2.3 Համայնքի թույլ կողմերը

- Մշակույթի տան կիսակառույց վիճակ,
- բուժկետի վատ վիճակ,
- բնակելի տների վատ վիճակ,
- խմելու ջրի ցանցի վատ վիճակ,
- հետիոտնային կամուրջների վատ վիճակ,
- հակակարկտային կայանների բացակայություն,
- միջհամայնքային ճանապարհների վատ վիճակ,
- ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը,
- ոռոգման ցանցի բացակայություն,
- կոյուղու բացակայություն,
- համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների բացակայություն, համայնքի առջև ծառացած առաջնահերթ խնդիրները լուծելու համար,
- սելավատարի բացակայություն,
- աղետների ռիսկերի նվազեցման, ԱԻ-ին արձագանքման և հետևանքների վերացման վերաբերյալ գիտելիքների ցածր մակարդակ,
- գյուղատնտեսական հողերի մշակման համար անհրաժեշտ մասնագիտացված տեխնիկայի բացակայություն,
- կլիմայի փոփոխությանը դիմակայելու և հարմարվելու համար անհրաժեշտ գիտելիքների, իրազեկվածության և հմտությունների բացակայություն:

2.4 Համայնքի հնարավորությունները

- բարենպաստ միջավայր ներդրողների համար,
- գյուղատնտեսական ոլորտի զարգացման հնարավորություն,
- ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ԱՌՆ ռազմավարություն, որպես ինստիտուցիոնալ և իրավական դաշտի կարգավորման մեխանիզմ,
- երկրում տեղի ունեցող նոր զարգացումները՝ ուղղված աղետների ռիսկի նվազեցման մշակույթի ձևավորմանը,
- համայնքների խոշորացման ծրագրում ներառված լինելու արդյունքում ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում լինելը,
- ԱՌՆԱՊ Ազգային պլատֆորմի առկայություն՝ որպես ԱՌՆ գործընթացների ազգային միասնական մեխանիզմ,
- աղետներին արձագանքելու և հետևանքների վերացման ուղղությամբ առկա իրավական դաշտ, որտեղ հստակ սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները,
- աղետների և կլիմայի ռիսկերի նվազեցմանն ուղղված նախագծերի ներառում համայնքային զարգացման պլաններում՝ ըստ ոլորտների,
- բնակչության ուսուցման և իրազեկվածության բարձրացման համար մասնագիտացված ուսումնական բարձրագույն հաստատության (Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա – ՃԿՊԱ), ինչպես նաև ուսումնական տարբեր նյութերի առկայություն,
- երկրում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների քաղաքականությունն՝ ուղղված համայնքաին ծրագրերի իրականացմանը,
- մարզային ԱՌՆ-թիմերի առկայություն,
- ԱՌՆ գործընթացներում մասնավոր բիզնեսի շահագրգռում և հնարավոր ներգրավում,
- ԱՌՆ համայնքային աշխատանքային խմբի ստեղծման համար առկա մարդկային ներուժ:

2.5 Համայնքի և մասնավորապես աղետների ռիսկի նվազեցման գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնները

Գոյություն ունեն նաև մի շարք խոչընդոտ հանդիսացող գործոններ, որոնք կարող են դանդաղեցնել կամ դադարեցնել հնարավոր զարգացումներն ու համայնքի կարողությունները.

- համայնքային մակարդակում ԱՌՆ զարգացումների դանդաղ ինտեգրումն ու տեղայնացումը,
- չնայած միգրացիայի նվազող տեմպերին, այնուամենայնիվ առկա միգրացիայի պատճառով համայնքի մարդկային և մասնագիտական ներուժի նվազում,
- համապատասխան տեխնիկայի բացակայություն,
- ԱՌՆ վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքի պակաս
- համայնքների խոշորացման գործընթացներում առկա անորոշություններ:

Համայնքի բնակիչների կողմից բացահայտված խնդիրները, դրանց պատճառներն ու բացասական հետևանքները, ինչպես նաև հնարավոր լուծումները`

ըստ խոցելիության և սկզբնական և կարողությունների բարձրացման

Վտանգի տեսակն ու ընդհանուր բնութագիրը	Խոցելի տարրեր	Բացասական հետևանքներ	ԽԿԳ արդյունքում առաջարկվող լուծումներ/ծրագրեր	Ակնկալվող արդյունք
Բնածին				
Երաշտ Վերջին տարիներին ամռան ամիսներին ջերմաստիճանի բարձրացման և տեղումների սակավության պատճառով դիտվում է երաշտային տարիների ավելացում: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ոռոգման ցանցի բացակայությամբ:	Անասնախոտ, ցանքատարածքներ, բանջարաբոստանային կուտուրաներ, բերք, գյուղատնտեսական կենդանիներ, խոտհարքներ, արոտավայրեր, պտղատու ծառեր, բնական աղբյուրներ:	Բերքատվության անկում, բերքի կորուստ, հետևաբար, կյուբական կորուստների հոգաբարձության ոլորտում: Երաշտը սպառնում է նաև անասնապահական ոլորտին, երբ աննախադեպ շոգի պատճառով արոտավայրերում և խոտհարքներում խոտի քանակը չի բավականեցնում անասնակերի հարցը լուծելու համար: Որոշ արոտավայրերում խմոցների բացակայության պատճառով նվազում է կաթնատվությունը: Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց շրջանում վարակիչ հիվանդությունների հավանականությունը: Դառնում է սակավաջրության պատճառ:	Տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում: Հուսալի օդերևութաբանական տեղեկատվության ապահովում: Ոռոգման ցանցի կառուցում: Խմոցների ավելացում:	Հնարավոր կորուստներից և հիվանդություններից խուսափում:

Կարկտահարություն Կարկտահարությունը միշտ դիտվել է համայնքում, սակայն վերջին տարիների ընթացքում այն հաճախացել է և սաստկացել: Միջին հաշվով տարվա ընթացքում կարկտահարումը տեղի է ունենում 3-4 անգամ: Կարկուտի պատճառած վնասները մեծ են, քանի որ հացահատիկի, կարտոֆիլի, մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման շրջանը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ:	Պտղատու ծառեր, ցանքատարածքներ, բերք, ընտանիկենդանիներ, բնակելի տներ, շենք-շինություններ, տրանսպորտային միջոցներ: Խոշոր չափի կարկուտը վտանգ է ներկայացնում նաև անասնապահական ոլորտի համար, հատկապես մանր եղջերավոր անասունների և ընտանի թռչունների համար:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում են բերքը, ցանքատարածքները, կոտրվում շինությունների ապակիները և տանիքածածկերը, վնասվում տրանսպորտային միջոցները: Երբեմն դառնում են սելավների առաջացման պատճառ: Բերում է էական նյութական կորուստների: Երբեմն կարկուտի հետևանքով դժվարանում է անասնակերի հավաքման գործընթացը:	Հակակարկտային միջոցների տեղադրում, կանխատեսման և ազդարարման համակարգի մշակում և կիրառում:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազեցում:
Ցրտահարություն Համայնքում դիտվում են ցրտահարման դեպքերի հաճախացում թե գարնան թե աշնան ժամանակահատվածում:	Այգիներ, բանջարաբուստանային որոշ կուլտուրաներ, հացահատիկի և կարտոֆիլի ցանքատարածքներ, բերք:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	Հուսալից ռեկուպիտացիայի ակնտեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում : Բնակչության իրազեկում ցրտահարությունից պաշտպանելու միջոցների, ձևերի վերաբերյալ:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազեցում:
Առատ տեղումներ Համայնքը տեղակայված է առատ տեղումների գոտում:		Առատ տեղումները առանց վնասի:	Մշակել և կիրառել կանխ	Նյութական կորուստ

ատտեղումներով բնորոշ տարածաշրջանում: Առատտեղումները արտահայտվում են առատության, անձրևի և կարկուտի տեսքով:	Բերք, բանջարաբուստանային կուլտուրաներ, ճանապարհներ, բնակելի տներ, շինություններ:	ավների առաջացման, սողանքների և քարաթափումների ակտիվացման, գերխոնավության պատճառ: Առատ տեղումները խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:	ատեսման և վաղազդարարման համակարգ: Ապահովել բնակչության իրազեկումը: Ճանապարհների եզրերին հեղեղատարի կառուցում և ճանապարհների բարեկարգում:	տների ցիստոսափում , ճանապարհների, շենք-շինությունների պաշտպանություն սելավների և հեղեղների ազդեցությունից:
Երկրաշարժ Երկրաշարժը անկախատեսելի երևույթ է և սպառնում է Հայաստանի ամբողջ տարածքին: Կարող է դառնալ նաև երկրորդային այլ երևույթների և արտակարգ իրավիճակների պատճառ:	Բնակելի տներ, շենք-շինություններ, մարդիկ և այլ:	Շենք-շինությունների փլուզում, ենթակառուցվածքների վնասում, մարդկային և նյութական կորուստներ, երկրորդային երևույթների առաջացում	Բնակչության ուսուցում: Սեյսմիկ ռիսկի գնահատում: Տների, շինությունների ամրացում:	Հնարավոր կորուստների ցիստոսափում:
Ուժեղ քամիներ Քամիները բնորոշ են տարածաշրջանին: Քամիների ուղղությունը և արագությունը հաստատուն չեն: Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքին:	Բնակելի տների, շենք-շինությունների տանիքներ, էլեկտրահաղորդակցման համակարգ, ցանքատարածքներ, այգիներ, բերք:	Պարբերական բնույթ կրող ուժեղ քամիները վնասում են տների և շենք-շինությունների տանիքները: Քամիների հետևանքով երբեմն խափանվում է էլեկտրամատակարարումը: Քամիները վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական ոլորտին, դառնալով մրգատու ծառերի կտրման և այգիների բերքի թափման պատճառ:	Մշակել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ և կիրառել: Ապահովել բնակչության իրազեկումը:	Նյութական կորուստներից խուսափում:

Քարաթափուլում Քարաթափումները դիտվում են միջհամայնքային ճանապարհի վրա:	Ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ, մարդիկ:	Ճանապարհի փակում, տրանսպորտային միջոցների վնասում, սպառնալիք մարդու կյանքին և առողջությանը:	Վտանգավոր հատվածների մասնագիտական զննում, քարտեզագրում, պարբերական մոնիթորինգի կազմակերպում: Շարժվող քարերի արհեստական տեղահանում և տեղափոխում, պատնեշների և հենապատերի կառուցում, լանջերի ցանցապատում:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազեցում:
Սելավ Համայնքի տեղադիրքի, հեղեղատարների և սելավատարների բացակայության պատճառով՝ առատ տեղումների հետևանքով առաջացած սելավային հոսքերը ողողում են ճանապարհները, վնասելով դրանք, լցվում տնամերձ տարածքներ, տներ:	Համայնքի ճանապարհներ, տնամերձեր, նկուղներ, գոմեր:	Համայնքի ճանապարհների, տնամերձերի, տների վնասում:	Հեղեղատարների կառուցում: Սելավատարների կառուցում:	Հեղեղումներից և հնարավոր կորուստներից խուսափում:
Սողանք Համայնքում առկա է սողանքային տեղամաս: Սողանքային երևույթների ակտիվացմանը նպաստում են առատ տեղումները:	Ճանապարհներ, խոտհարքներ,	Ճանապարհների և խոտհարքների վնասում,	Վտանգավոր հատվածների մասնագիտական հետազոտում, քարտեզագրում, պարբերական մոնիթորինգի	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազեցում:

			կազմակերպում:	
Կայծակ Կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը:	Էլեկտրասարքավորումներ, մարդիկ, անասուններ:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է Էլեկտրահաղորդակցումը և կապը: Մարդկանց առողջությանը և կյանքին սպառնալիք: Անասունների կորուստ:	Շանթարգելների տեղադրում: Բնակչության իրազեկում, ուսուցում:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազում:
Մարդածին				
Պայթյուններ, հրդեհներ Փլուզումներ	Բնակելի տներ, շինություններ, մարդիկ, ընտանի կենդանիներ, թռչուններ:	Նյութական կորուստներ: Սպառնալիք մարդկանց առողջությանը և կյանքին, կենդանիների և թռչունների կորուստ:	Անվտանգության կանոնների ուսուցում, պահպանում: Բնակչության իրազեկում, ուսուցում:	Հնարավոր կորուստներից խուսափում:
Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհներ	Խոտածածկ տարածքներ, կենդանիներ, բուսականություն	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության անկում, էրոզիա	Տեղեկատվական վահանակների տեղադրում: Անվտանգության կանոնների ուսուցում:	Էկոհամակարգի, բնակչության կենսակերպի և առողջության պահպանում:
Այլ վտանգներ				

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ	Անասնապահություն	Անասնագլխի անկում, եկամուտների նվազում, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում:	Բնակչության ուսուցում և իրազեկում հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ, անասնաբու-ժական կետի հիմնում	Հնարավոր նյութական կորուստներից խուսափում, նվազեցում:
Վայրի գազաններ	Մարդիկ, կենդանիներ	Մարդկանց կյանքին և առողջության սպառնալիք, գյուղատնտեսական կենդանիների կորուստ:	Կանոնակարգված որս, ԱՕ ուսուցում, իրազեկում և վարքականոսների ուսուցում:	Հնարավոր կորուստներից խուսափում:
Կրծողներ, Միջատներ	Ցանքեր, ցանքատարածքներ, խոտհարքներ. բերք:	Որոշմշակաբույսերի ոչնչացում, բերքի նվազում:	Համակարգված պայքար միջոցների կիրառում տարվա բոլոր հատվածներում:	Հնարավոր նյութական կորուստներից խուսափում:

 ՀՀԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
ՄԱՐԶ	ԼՈՐՈՒՏ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	<<__>> դեկտեմբեր 2015թ.
Հրաչյա Սահակյան	<ստորագրություն>
ՀԱՄԱՅՆՔՆԵՑՎԱԾ Է՝ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	<<__>>դեկտեմբեր 2015_թ.
<անուն, ազգանուն>	<ստորագրություն>
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Հրաչիկ Անտոնյան	<<__>>դեկտեմբեր 2015_թ.
ԿՆԻՔ	<ստորագրություն>
	

ՍՈՒՅՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ՏՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

<<__>>_դեկտեմբեր 2017թ.



ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏՀՐԱՅԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ

<անուն, ազգանուն>

<ստորագրություն>

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ	Լորուտ համայնքը գտնվում է Լոռու մարզում, Թումանյանի տարածաշրջանում, Մարց գետի հովտի աջափնյա լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հյուսիս, Ալավերդի քաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք, անտառապատ, գեղատեսիլ վայրում: Գյուղը տեղակայված է ծովի մակերևույթից մոտ 1500 մ բարձրության վրա:
ԳՅՈՒՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ	7652,38
ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	լեռնային



3.ԼՈՐՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՈՏՈՂԱԾՆԻՆԴԵՐԵՎ ԴՐԱՆՑԱՌԱՅԵՐԹԼՈՒԾՈՒՄՆԵՐ

3.1 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱԿԻՐՃՆԿԱՐԱԳԻՐ

ՎՏԱՆԳԻ ՏԵՍԱԿՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ԽՈՑԵԼԻ ՏԱՐԻՐ	ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՆԱԾԻՆ			
Երաշտ Երաշտին ախապայմաններից է, երբ գարնանը մշակաբույսերի ինտենսիվ ոռոգման շրջանում դիտվում է տեղումների սակավություն և չի իրականացվում արհեստական ոռոգում: Վերջին տարիներին ամռան ամիսներին ջերմաստիճանի բարձրացման և տեղումների սակավության պատճառով դիտվում է երաշտային տարիների ավելացում: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ոռոգման ցանցի բացակայությամբ:	Անասնախոտ, ցանքատարածքներ, բանջարաբուստանային կուլտուրաներ, բերք, գյուղատնտեսական կենդանիներ, խոտհարքներ, արոտավայրեր, պտղատու ծառեր, բնական աղբյուրներ:	Բերքատվության անկում, բերքի կորուստ, հետևաբար, նյութական կորուստների հոգաբարձության խնդիրներ: Երաշտը սպառնում է նաև անասնապահական ոլորտին, երբ աննախադեպ շոգի պատճառով արոտավայրերում և խոտհարքներում խոտի քանակը չի բավականացնում անասնակերի հարցը լուծելու համար: Որոշ արոտավայրերում խմոցների բացակայության պատճառով նվազում է կաթնատվությունը: Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների հավանականությունը: Դառնում է սակավաջրության պատճառ:	• Բջջային հեռախոսակապ, • Մարդկային ռեսուրսներ, • Բնակլիմայական բարենպաստ պայմաններ անասնապահության և մեղվապահության զարգացման համար, • Ինտերնետ, • Տեղեկատվական աղբյուրների հասանելիություն, • Խմելու ջուր, • Որոշակի տրանսպորտային միջոցներ • Մշակված տնամերձ հողատարածքներ • Բնական աղբյուրներ, • Զիջանություն, • Դպրոց,

Կարկտահարություն Կարկտահարությունը միշտ դիտվել է համայնքում, սակայն վերջին տարիների ընթացքում այն հաճախացել է և սաստկացել: Միջին հաշվով տարվա ընթացքում կարկտահարումը տեղի է ունենում 3-4 անգամ: Կարկուտից պատճառված վնասներն շատ են, քանի որ հացահատիկի, կարտոֆիլի, մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման ժամկետը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ:	Պտղատու ծառեր, ցանքատարածքներ, բերք, ընտանիկենդանիներ, բնակելի տներ, շենք-շինություններ, տրանսպորտային միջոցներ:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում է բերքը, ցանքատարածքները, կոտրվում շինությունների ապակիները և տանիքածածկերը, վնասում տրանսպորտային միջոցները: Երբեմն դառնում են սելավների առաջացման պատճառ: Բերում է էական նյութական կորուստների: Խոշոր չափի կարկուտը վտանգ է ներկայացնում նաև անասնապահական ոլորտի համար, հատկապես մանր եղջերավոր անասունների և ընտանի թռչունների համար: Երբեմն կարկուտի հետևանքով դժվարանում է անասնակերի հավաքման գործընթացը:	• Գետակ, • Մանկապարտեզ, • Բնական գազ, • Պատմամշակութային կոթողներ, • Անտառ, • Ջրի պաշարներ, • Աշխատուժ, • Բուժկետ, • 2 ավտոմոբիլային կամուրջ, • 1 հետիոտնային կամուրջ, • Հողային բավարար ռեսուրսներ:
Ցրտահարություն Համայնքում հողագործությունով զբաղվում են հիմնականում տնամերձ տարածքներում: Աճեցված գյուղմթերքները հիմնականում սեփական օգտագործման համար են: Են ցրտահարման դեպքերի հաճախացում թե գարնան թե աշնան ժամանակահատվածում:	Այգիներ, բանջարաբուստանային որոշ կուլտուրաներ, հացահատիկի և կարտոֆիլի ցանքատարածքներ, բերք:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	

Առատ տեղումներ Համայնքը տեղակայված է առատ տեղումներով բնորոշ տարածաշրջանում: Առատ տեղումները արտահայտվում են առատ տեղումներով, անձրևի և կարկուտի տեսքով: Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման պատճառ: Առատ տեղումները նպաստում են նաև քարաթափումների և սողանքների ակտիվացմանը:	Բերք, բանջարաբուստանային կուլտուրաներ, ճանապարհներ, բնակելի տներ, շինություններ:	Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, սողանքների և քարաթափումների ակտիվացման, գերիսնալվայի պատճառ: Առատ տեղումները խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:	
Երկրաշարժ Երկրաշարժը անկախատեսելի երևույթ է և սպառնում է Հայաստանի ամբողջ տարածքին: Կարող է դառնալ նաև երկրորդային այլ երևույթների և արտակարգ իրավիճակների պատճառ:	Բնակելի տներ, շենք-շինություններ, մարդիկ և այլ:	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների, երկրորդային երևույթների առաջացման պատճառ:	
Ռիժեղ քամիներ Քամիները բնորոշ են տարածաշրջանին: Քամիների ուղղությունը և արագությունը հաստատուն չեն: Ռիժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքին:	Բնակելի տների, շենք-շինությունների տանիքներ, էլեկտրահաղորդակցման համակարգ, ցանքատարածքներ, այգիներ, բերք:	Պարբերական բնույթ կրող ուժեղ քամիները վնասում են տների և շենք-շինությունների տանիքները: Քամիների հետևանքով երբեմն խափանվում է էլեկտրամատակարարումը: Քամիները վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական ոլորտին, դառնալով մրգատու ծառերի կտրման և այգիների բերքի թափման պատճառ:	

Քարաթափումներ Քարաթափումները դիտվում են միջհամայնքային ճանապարհի վրա: Դրանք սպառնալիք են ներկայացնում տրանսպորտային միջոցների և մարդկանց համար:	Ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ, մարդիկ:	Ճանապարհի փակում, տրանսպորտային միջոցների վնասում, սպառնալիք մարդու կյանքին և առողջությանը:	
Սելավ Համայնքի տեղադիրքի, հեղեղատարների և սելավատարների բացակայության պատճառով՝ առատ տեղումների հետևանքով առաջացած սելավային հոսքերը ողողում են ճանապարհները, վնասելով դրանք, լցվում տնամերձ տարածքներ, տներ:	Համայնքի ճանապարհներ, տնամերձեր, նկուղներ, գոմեր:	Համայնքի ճանապարհների, տնամերձերի, տների վնասում:	
Սողանք Քարաթափումները դիտվում են միջհամայնքային ճանապարհի վրա: Դրանք սպառնալիք են ներկայացնում տրանսպորտային միջոցների և մարդկանց համար:	Ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ, մարդիկ:	Ճանապարհի փակում, տրանսպորտային միջոցների վնասում, սպառնալիք մարդու կյանքին և առողջությանը:	
Ամպրոպ / կայծակ Ամպրոպներն ու կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպը և կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը:	Էլեկտրասարքավորումներ, մարդիկ, անասուններ:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է Էլեկտրահաղորդակցումը և կապը: Մարդկանց առողջությանը և կյանքին սպառնալիք: Անասունների կորուստ:	

Մարդածին			
Պայթյուններ, Հրդեհներ Փլուզումներ	Բնակելի տներ, շինություններ:	Նյութական և մարդկային կորուստներ:	
Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհներ	Խոտածածկ տարածքներ, կենդանիներ, բուսականություն	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության անկում, էրոզիա	
Այլ վտանգներ			
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ	Անասնապահություն	Անասնազլխի անկում, եկամուտների նվազում, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում:	
Վայրի գազաններ	Մարդիկ, կենդանիներ:	Մարդկանց կյանքին և առողջության սպառնալիք, գյուղատնտեսական կենդանիների կորուստ:	
Կրծողներ, Միջատներ	Ցանքեր, ցանքատարածքներ, խոտհարքներ:	Որոշ մշակաբույսերի ոչնչացում, բերքի նվազում:	

3.2 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ	ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ	ԱՌՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ	ԱՂԵՏԱԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՅՈՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	Համապատասխան գույքով, սարքավորումներով, գրականությամբ վերազինումը կնպաստի որակյալ ուսուցման կազմակերպմանը, անձնակազմի և աշակերտների ԱՌՆ վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը, կնպաստի աղետներից պաշտպանվածության և դիմակայունության մակարդակի բարձրացմանը:	ԱՌՆ միջոցառումների իրականացումը զգալիորեն կթեթևացնի կրթության համակարգի զարգացման հարցը, քանզի միջոցները, որ տարեցտարի ուղղվում էին տարատեսակ աղետների հետևանքների վերացմանը, կուղղորդվեն կրթական համակարգի բարելավմանը, ինչը կապահովի կրթության շարունակականությունը համայնքում: Կրթօջախների սեյսմակայունության մասնագիտական զննումը հնարավորություն կնձեռնի լավագույնս կազմակերպել համապատասխան շինությունների վերանորոգման ու վերակառուցման աշխատանքները, հետագայում դրանց պահպանումը, շահագործումը ու ընթացիկ վերանորոգումը: Կրթական համակարգում ԱՌՆ ուսուցումը ներառելու արդյունքում կբարելավվեն աշակերտների և ուսուցչական կազմի աղետին դիմակայելու ունակությունները, ինչը կնվազեցնի մարդկային կորուստների և առողջությանը սպառնացող վտանգների ռիսկը:	Նվազագույնի հասցնել սպառնացող աղետներից / ուժեղ քամիներ, երկրաշարժ, հրդեհ/ կրթական համակարգին հասցվող հնարավոր վնասը՝ վերանայելով և հզորացնելով կրթական համակարգի աղետներին դիմակայելու կարողությունները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	Համայնքի և մարզի առողջապահական համակարգի բարելավումը, բուժփիմնարկի շենքային և աշխատանքային պայմանների բարելավումը, համաճարակների ժամանակին կանխարգելումը և հակահամաճարակային պայքարի ծավալումը, բնակչության իրազեկվածության բարձրացումը զգալիորեն կնվազեցնի աղետներից և համաճարակներից մարդկանց առողջությանը սպառնացող ռիսկը:	Համայնքին սպառնացող ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները, բնակչության գիտելիքների բարձրացումը աղետներին պատրաստվածության և համաճարակներին դիմակայելու հարցում, հանրային ծառայությունների ենթակառուցվածքի կնպաստեն բնակչության անվտանգության ապահովմանը, նրանց առողջության և կյանքի պահպանմանը և բարելավմանը:	Բնակչության առողջության և կայնքին սպառնացող վտանգներից հասցվող վնասը նվազագույնի հասցնելու նպատակով հիմնել բուժկետ, ապահովել որոշ ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումը, բնակչության գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը աղետներին և համաճարակներին պատրաստվածության ուղղությամբ:
ՇՐՋԱԿԱՄԻՋԱՎԱՅՐ	Բնապահպանական միջոցառումների հետևողական իրագործումը, Էներգետիկ համակարգի բարելավումը, մարդու հետագա վնասակար գործունեության կանխումը կնվազեցնի տարատեսակ երևույթներից բնությանը սպառնացող ռիսկերը, հատկապես Էկոլոգիականը:	Համայնքի հանրային ծառայությունների պատշաճ մակարդակով կազմակերպումն ու Էներգետիկ համակարգի բարելավումը, գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ճիշտ կազմակերպումը, գյուղատնտեսական, առողջապահական և բնապահպանական ոլորտներում բնակչության գիտելիքների մակարդակի բարձրացումը, կանաչապատ տարածքների ընդլայնումը կնպաստի համայնքի և տարածաշրջանի բնապահպանական վիճակի բարելավմանը:	Շրջակա միջավայրի պահպանման, հասցվող վնասի նվազեցման, բնապահպանական վիճակի բարելավման համար ապահովել որոշ ենթակառուցվածքների գործարկումը և ծառայությունների բարելավումը, բնակչության շրջանում բնապահպանական գիտելիքների տարածումը, կանաչապատ տարածքների պահպանումը և ընդլայնումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	Գյուղատնտեսության ժամանակակից մեթոդներին տեղի տալով, վերամշակող, տնտեսություններին հիմնով, անհրաժեշտ գյուղատնտեսական արտադրանքները և մշակաբույսերի և անասնաբուծության արտադրանքները, խորքային հորերի համակարգի և ռոտացիոն ցանցի բարելավումը, նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի և անասնաբուծության անկիրառումը, թունաքիմիկատների, պարարտանյութերի և սերմերի որակի վերահսկումը, պլանավորված օգտագործումը կնպաստի հողերի բերրիության բարձրացմանը՝ միաժամանակ նվազեցնելով հողերի անապատացման և էռոզիայի վտանգը: Միևնույն ժամանակ, հողերին տեսիլ օգտագործումը առկա ռոտացիոն համակարգի պայմաններում և արոտավայրերի ոչ ճիշտ օգտագործումը կմեծացնի հողերի էռոզացման վտանգը:	Կարկտահարության, երաշտի, քարաթափման և ցրտահարության ռիսկերի նվազեցմանն ուղղված մեղմացման և կանխարգելիչ աշխատանքները, հարմարվողականության ծրագրերի իրականացումը և նոր մշակաբույսերի և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև հողերի պաշտպանության և էռոզիայի դեմ պայքարի պլանավորված միջոցառումները, անասնապահական ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը բարենպաստ պայմաններ կստեղծեն ոլորտի կայուն զարգացման համար:	Գյուղատնտեսական ոլորտին սպառնացող ռիսկերից հասցվող վնասը նվազեցնելու նպատակով ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ որոշ ենթակառուցվածքների՝ հատկապես ռոտացիոն համակարգի, դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների բարելավման, անասնապահամաճարակների դեմ պայքարի ուղղությամբ, մշակել և իրագործել կլիմայի փոփոխությանը հասցեագրված հարմարվողականության ծրագրեր, ներառյալ նոր մշակաբույսերի ներդրումը, կազմակերպել բնակչության ուսուցումը գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների՝ հատկապես նոր տեխնոլոգիաների կիրառման մշակույթ ձևավորելու վերաբերյալ:
ԲՆԱԿԱՐԱՆԱԾԻՆՈՒԹՅՈՒՆ, ԶԱՂԱՔԱԾԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾԵ	Բնակելի տների, շինությունների և ենթակառուցվածքների աշխատանքային վիճակի և վթարայնության համալիր հետազոտումը, դրանց ժամանակին վերականգնումը, վերանորոգումն ու պահպանությունը, շինարարության համար նոր հողատեղակայումներ անելու ռիսկային գործոնների հաշվի առնումը և, վերջապես, շինարարություն իրականացնելու կառուցապատման համար սահմանված բոլոր նորմերի խստագույն պահպանումը կնվազեցնի գոյություն ունեցող սպառնալիքների ռիսկը և կկանխի նոր ռիսկերի գոյացումը:	ԱՌՆ միջոցառումների իրագործումը կնպաստի շենքերի, շինությունների և ենթակառուցվածքների երկարակեցության ապահովմանը, կնվազեցնի վթարայնության աճի տեմպերը, թույլ կտա հետևանքները վերացնելու տրամադրվող միջոցները խնայել և ուղղել դրանք կանխարգելիչ և մեղմացման ծրագրերի իրագործմանը:	Նվազագույնի հասցնել սպառնացող ռիսկերից համայնքի տներին, շենք-շինություններին, ենթակառուցվածքներին հասցվող հնարավոր վնասները՝ վերանայելով և հզորացնելով համայնքի աղետներին դիմակայելու կարողությունները, վերանորոգելով և վերակառուցելով ենթակառուցվածքներն ու շենք-շինությունները:

ՉԲԱՂԱՏՈՒԹՅՈՒՆԵՎԱՊՐԵԼԱ ՄԻՋՈՑՆԵՐ	Նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսական և սոցիալական իրավիճակի բարելավումը, զբաղվածության և ժամանցի ապահովումը կբերի սեփական և համայնքային շահերի համատեղմանը համայնքի կայուն զարգացումը ապահովելու գործում, անդրադառնալով նաև սպառնալիքներին և ռիսկերին:	Աղետների ռիսկի նվազեցումը հանդիսանում է կայուն զարգացման հիմնական գրավականներից մեկը, ինչը կնպաստի տնտեսական բոլոր ոլորտների դրական զարգացման վրա, ստեղծելով նոր աշխատատեղեր և բարիքներ:	Ապահովել համայնքի հինական տնտեսական ոլորտների արդյունավետությունը, երաշխավորելով ենթակառուցվածքների և համակարգերի որակյալ գործարկումը, հակակարկտային, ոռոգման կազմակերպման, կրծողների և գայլերի դեմ ուղղված միջոցառումների իրականացումը, հարմարվողականության երկարաժամկետ ծրագրերի պլանավորումն ու իրագործումը:
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԵՎԱՆՆԻՏ ԱՐԻԱ	Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի անցկացում, խմելու ջրի որակի վերահսկումը կնպաստի առողջ ապրելակերպի կայացման խնդրին: Այն միևնույն ժամանակ կկանխի կեղտաջրերի և անձրևաջրերի ներթափանցումը տնամերձեր և այլ գյուղատնտեսական նշանակության հողեր: Ոռոգման համակարգի բարելավումը կկանխի սակավաջրությունը:	Կոյուղացումը և ջրահեռացման համակարգերի, մաքրման կայանի հիմնումը կնվազեցնի համաճարակների բռնկման ռիսկը: Բնակչության ուսուցումը և իրազեկումը կնվազեցնի համաճարակների բռնկման, բնակչության առողջապահության սպառնալիքները: Երաշտի վտանգը կնվազի ոռոգման համակարգի ճիշտ կառավարման արդյունքում:	Ապահովել խմելու ջրի որակը և անխափան մատակարարում, լուծել համայնքի կոյուղու, կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման և մաքրման, հարցը: Բարելավել ոռոգման և խորքային հորերի համակարգը:
ՏԵՂԱԿԱՆԻՆՔՆԱԿԱՐԱՎԱՐՈՒՄ , ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՉԱՐԳԱՑՈՒՄ	Համայնքի յուրաքանչյուր բնակիչ, մասնակից դառնալով համայնքի կառավարման գործընթացին, մեծապես կնպաստի համայնքի անվտանգությունն ու զարգացումն ապահովելու համար ձեռնարկվող քայլերի իրականացմանը, ԱՌՆ –ն դիտելով որպես զարգացման կարևորագույն գործոն:	ԱՌՆ մարզային և տեղական թիմերի ստեղծումը, համայնքում ԱՌՆ կառավարման մասնակցային մեխանիզմների ներդրումը կխթանի տեղական ինքնակառավարման մարմինների դեմոկրատիզացիան, ապահովելով համայնքի բնակչության մասնակցությունը որոշումներ ընդունելու և դրանց իրականացմանը հետամուտ լինելու գործում:	Միջոցներ ձեռնարկել ԱՌՆ կառավարումը համայնքային ինքնակառավարման գործառնություններում ներառելու ուղղությամբ, համայնքի զարգացման պլաններում հաշվի առնել համայնքին սպառնացող և վերջինիս զարգացումը սահմանափակող ռիսկերն ու դրանց նվազեցման ուղիները:

3.3 ԱՌՆԱՊԻՐՆԵՐԻ ՆՈՒՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՍՏՎԵՐՁԻՆՆԵՐԻ ՍԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅԱՆ

ՉԱՐԳԱՅՄԱՆՈՒՐՏ	ԱՌԱՋԱՐԿՆԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ	ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ		ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ	ՔԶԾ-ՈՒՄ ԻՆՏԵԳՐՈՒՄ
		Գերակայության ցուցանիշ	Իրականացման ժամկետը		
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	Կրթական օջախների սեյսմակայունության և տեղադիրքի մասնագիտական հետազոտում	4	2015	ՄԱԿ-ի մասնական հիմնադրամ և ԱՌՆԱՊ	
	Կրթական օջախներում աղետների նպատրաստվածության վերաբերյալ անձնակազմի և աշակերտների ԱՌՆ ուսուցում:	1			xxx
	Դպրոցի վերանորոգում	3			
	Մանկապարտեզի վերանորոգում	2			
ԴՊՐՈՑ	Դպրոցի վերանորոգում	10			
	Մարզադահլիճի վերանորոգում	1			
	Բուժկետի հիմնում	9			
	Ջրամատակարարման բարելավում	8			
	Անձրևաջրերի և հալոցքաջրերի հեռացման համակարգի բարելավում	7			
	Կոյուղագծի վերանորոգում	6			
	Երկու մասնաշենքի տանիքի վերանորոգում	15			
	Կահույքի ձեռքբերում	5			
	Սպորտային գույքի ձեռքբերում	2			
	Ուսումնական նյութերի և պարագաների ձեռքբերում	3			
	Դռների և լուսամուտներ փոփոխում	4			
	Տարահանման նշանների փակցում	11			xxx

	Աղետների և արտակարգ իրավիճակների վերաբերյալ հուշաթերթիկների և հանձնարարականների փակցնում	14			xxx
	Դպրոցում ուսումնական տարահանումների կազմակերպում	13			xxx
	Դպրոցի հարմարեցում հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն երեխաների կարիքներին	16			
	Դպրոցի տարածքում առկա կիսաքանդ շինության քանդում և տարածքի մաքրում	12			
ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ	Համայնքի բնակչության ուսուցում և իրազեկում ԱՌՆ /ԱՕ, վարքականոններ և այլն/ վերաբերյալ	1			xxx
	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	9			xxx
	Ջրամատակարարման բարելավում /ջրամբարների, արտաքին ջրագծի և ներքին ցանցի վերանորոգում/	2			
	Կոյուղու կառուցում	10			
	Դպրոցում բուժկետի հիմնում	4			
	Միջհամայնքային ճանապարհների վերանորոգում	8			
	Լաբորատորիայի հիմնում	3			
	Բուժսարքավորումների ձեռքբերում	7			
	Բուժկետի վերանորոգում	6			
	Կենտրոնացվածաղբահանության կազմակերպում հարևան համայնքների հետ միասին	5			

ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱՅՐ	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	5			xxx
	Բնապահպանական ուսուցման կազմակերպում	4			
	Կենտրոնացված աղբահանության կազմակերպում /հարևան համայնքների հետ միասին/	1			
	Կոյուղու կառուցում	7			
	Սելավատարների /հեղեղատարների կառուցում	6			
	Սողանքային /քարաթափման գոտիների մասնագիտական հետազոտում	3			
	Սողանքները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	8			
	Ոռոգման համակարգի հիմնում	2			
ԳՅՈՒԴԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ	Գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսուցում և իրազեկում	6			
	Գյուղատնտեսական միավորումների հիմնում	7			xxx
	Ոռոգման համակարգի հիմնում	12			
	Հակակարկտային կայանների տեղադրում	8			

	Գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում և նորի ձեռքբերում	1			
	Շանթարգելների տեղադրում	11			
	Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	10			
	Կամուրջների վերանորոգում	3			xxx
	Մթերման կետերի հիմնում	2			
	Վերամշակողարտադրամասերի հիմնում	9			
	Սողանքները /քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացում	4			
	Մկնանման կրծողների և միջատների դեմ պայքարի միջոցների կիրառում	5			
ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ	Համայնքի շենք-շինությունների սեյսմակայունության մասնագիտական հետազոտում	9			
	Սողանքային /քարաթափման գոտիների մասնագիտական հետազոտում	25			
	Սողանքները /քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացումը	24			
	Ստեղծագործականարդյունքների				
	Սելավատարների /հեղեղատարների կառուցում	8			
	Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում	7			
	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, լուսավորում	1			xxx

	Համայնքապետարանի վերանորոգում/ լուսամուտների փոխարինում/	13			
	Դպրոցի վերանորոգում	12			
	Մանկապարտեզի վերանորոգում	5			xxx
	Բուժկետի վերանորոգում	11			
	Համայնքի տնտեսական նշանակության որոշ շինությունների վերանորոգում /պահեստ, փուռ, ավտոպարկ, գոմեր և այլն/	10			
	Ջրամատակարարման բարելավում /ջրամբարների, արտաքին ջրագծի և ներքին ցանցի վերանորոգում/	4			
	Կոյուղու կառուցում	14			
	Կենտրոնացվածաղբահանության կազմակեր պում \հարևան համայնքների հետ միասին\	15			
	Ոռոգման համակարգի հիմնում	16			
	Մշակույթի տան վերակառուցում	2			
	Եկեղեցու հիմնանորոգում	6			
	Կամուրջների վերանորոգում	19			
	Հակակարկտային կայանի տեղադրում	23			
	Շանթարգելների տեղադրում	17			
	Համայնքի բնակելի տների վերանորոգում	22			
	Հյուրատների հիմնում	3			
	Կենցաղսպասարկման, հանրային սննդի և այլ ծ առայությունների օբյեկտների հիմնում	20			

	Վերամշակող և այլ փոքր արտադրամասերի հիմնում	21			
	Մթերման կետերի հիմնում	18			
	Սպորտդահլիճի նորոգում	26			
ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՏՆԵՐ	Գյուղատնտեսական միավորումների հիմնում	14			xxx
	Ոռոգման համակարգի հիմնում	13			
	Հակակարկտային կայանների տեղադրում	3			
	Գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում և նորի ձեռքբերում	1			
	Ջրամատակարարման բարելավում	9			
	Սողանքները/քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	10			
	Սելավատարների /հեղեղատարների կառուցում	4			
	Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում	7			
	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, լուսավորում	6			xxx
	Համայնքապետարանի վերանորոգում/լուսամուտների փոփոխում/	5			
	Դպրոցի վերանորոգում	11			
	Մանկապարտեզի վերանորոգում	8			xxx

	Բուժկետի վերանորոգում	19			
	Համայնքի տնտեսական նշանակության որոշ շինությունների վերանորոգում /պահեստ, փուռ, ավտոպարկ, գոմեր և այլն/	2			
	Կոյուղու կառուցում	12			
	Կենտրոնացված աղբահանության կազմակերպում \հարևան համայնքների հետ միասին\	15			
	Ոռոգման համակարգի հիմնում	23			
	Մշակույթի տան վերակառուցում	24			
	Եկեղեցու հիմնանորոգում	14			
	Կամուրջների վերանորոգում	22			
	Շանթարգելների տեղադրում	20			
	Համայնքի բնակելի տների վերանորոգում	16			
	Հյուրատների հիմնում	21			
	Կենցաղսպասարկման, հանրային սննդի և այլ ծառայությունների օբյեկտների հիմնում	19			
	Վերամշակող և այլ փոքր արտադրամասերի հիմնում	17			
	Մթերման կետերի հիմնում	18			

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԵՎ ՍԱՆԻՏԱՐԻԱ	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	5			xxx
	Կոյուղու կառուցում	6			
	Ջրամատակարարման բարելավում /ջրամբարների, արտաքին ջրագծի և ներքին ցանցի վերանորոգում/	2			
	Ոռոգման համակարգի հիմնում	3			
	Սելավատարների/հեղեղատարների կառուցում	4			
	Կենտրոնացված աղբահանության կազմակերպում \հարևան համայնքների հետ միասին\	1			
ՏԵՂԱԿԱՆԻՆՔՆԱԿԱՌԱՎ ԱՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄ	Համայնքի ԱՌՆ հավաստագրի ձևավորում և հաստատում				
	Համայնքի զարգացման / տարեկան պլանների մշակում և իրականացում				
	Համայնքահեն փոքրածավալ ԱՌՆ ծրագրերի իրականացում				
	ԱՌՆ կառավարման գործառնությունների ամենամյա մոնիտորինգ և գնահատում				

4. Երեխաները և համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտի վերլուծություն

4.1 Տնտեսական ոլորտ

Համայնքն ունի տնտեսական աճի համար անհրաժեշտ մի քանի նախադրյալներ՝ անասնապահության, մեղվապահության, այգեգործության և պտղաբուծության համար նպաստավոր միջավայր (բարենպաստ կլիմա, հողատարածքներ, արոտավայրեր և այլն), մարդկային ներուժ, բնական ռեսուրսներ (գետ, աղբյուրներ, անտառ) և այլն:

Համայնքի հիմնական եկամտի աղբյուրը անասնապահությունն է: Տնամերձերում զբաղվում են նաև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, կարտոֆիլի և հատապտուղների մշակությամբ: Վերջին տարիներին զարգացել է նաև մեղվապահությունը: Սակայն բնակիչները մեծ վնասներ են կրում ստացված բերքը սպառողին հասցնելու հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով: Կան նաև այլ բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչնդոտ են հանդիսանում այս ոլորտների զարգացման համար. վառելիքի բարձր գին, տեխնիկայի բացակայություն կամ եղածի մաշվածություն, մթերման կետերի և վերամշակող արտադրամասերի բացակայություն, գյուղատնտեսական արտադրանքի ցածր գներ և այլն: Գյուղատնտեսությունից ստացվող եկամուտը ուղղակիորեն կախված է նաև բնության քմահաճույքներից և կրում է սեզոնային բնույթ: Վերջին տարիների ընթացքում եղանակի անոմալ դրսևորումներ և հաճախացած որոշ բնածին երևույթները դառնում են բերքի և անասնակերի մասնակի կամ լրիվ կորստի պատճառ:

Համայնքի աղքատության տոկոսը կազմում է 30%:

Տնտեսական ոլորտի ՌԻՑԿՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր (S)	Թույլ կողմեր (W)
- Համայնքի վարչական տարածքը կազմում է 7652.38 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 4957.5 հա(վարչական տարածքի 65%-ը): - Որոշակի գյուղատնտեսական տեխնիկա (տրակտոր, կոմբայն ?) - Գյուղատնտեսական կենդանիներ (խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզ, մեղվաբնույթներ, ընտանի թռչուններ) - Բարենպաստ բնակլիմայական պայմաններ - Ջրաբերական համակարգ - Սեփական կերարտադրության ապահովում - Հացի փուռ - Անասնագույներ - Պահեստ, - Արհեստանոց, - Ավտոպարկ - Անտառներ - Բնական աղբյուրներ	- Գործազրկության բարձր մակարդակ % - Մթերման կետերի բացակայություն - Վերամշակող արտադրամասերի բացակայություն - Միջհամայնքային ճանապարհների վատ վիճակ - Դաշտամիջան ճանապարհների վատ վիճակ - Նյութա-տեխնիկական բազայի անբավարարություն - Սպառման շուկայի դժվար հասանելիություն - Գյուղարտադրանքի ցածր գին - Հակակարկտային կայանների բացակայություն - Ոռոգման ցանցի բացակայություն - Վնասների փոխհատուցման և ապահովագրական համակարգի բացակայություն - Գյուղատնտեսական և այլ վարկերի բարձր տոկոսադրույթ - Մասնագիտական աջակցության բացակայություն - Կլիմայի փոփոխությանը դիմակայելու և հարմարվելու համար անհրաժեշտ գիտելիքների, իրազեկվածության և հմտությունների անբավարար մակարդակ:

Հնարավորություններ (O)	Վտանգներ (T)
- Գյուղատնտեսական միավորումների հիմնում - Գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսուցման և իրազեկման կազմակերպում - Նոր մշակաբույսերի ներդրում - Ջերմոցային տնտեսությունների հիմնում - Մեղվապահության զարգացում	- Պետական մոտեցումների բացակայություն - Գյուղատնտեսության գների նվազում - Գյուղատնտեսության կախվածություն բնության քմահաճույքներից: - Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների սպառնալիք - Անտառահատումներ

4.2 Սոցիալական ոլորտ

Համայնքի զարգացման համար կարևոր հանգամանքներից մեկը բնակչության թվաքանակն է, որի ավելացումը կամ նվազումը կախված է միջաբեկից և ռիսկից: Դրանցից մեկն արևմտյան ուղղությամբ տեղափոխվելու ռիսկն է, քանի որ աշխատանքի տեղափոխվելու համար մեկնելու համար անհրաժեշտ է ունենալ ֆինանսական և տեղական իշխանության հետ կապեր: Միգրացիոն գործընթացներում ընդգրկված են հիմնականում երիտասարդ ընտանիքներ, որոնք տեղափոխվելու համար օգտագործում են տեղական իշխանության օգնությունը: Երիտասարդության համար գյուղում աշխատելու օգնություն է բաժանվում, որի օգնությամբ երիտասարդները կարող են տեղափոխվել և աշխատել արտաքին շուկայում: Երիտասարդության ընդհանուր թվի մի մասը տեղափոխվելու համար օգնություն է ստանում, որի օգնությամբ նրանք կարող են տեղափոխվել և աշխատել արտաքին շուկայում: Կան նաև տեղական իշխանության օգնություն: Այդ պայմաններն ապահովելու համար համայնքում անհրաժեշտ է առաջին հերթին ապահովել բնակչության զբաղվածությունը և ստեղծել բարենպաստ պայմաններ կենսամակարդակը բարձրացնելու համար:

Սոցիալական ոլորտի ՌԻՑՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր (S)	Թույլ կողմեր (W)
- Գեղատեսիլ բնություն - Որոշակի տրանսպորտային միջոցներ - Համայնքապետարան - Բուժկետ - Միջնակարգ դպրոց - Մանկապարտեզ - Ճաշարանի շենք - Բաղնիք - Խմելու ջուր (համայնքի 50%) - Գազաֆիկացում - Բնական աղբյուրներ - Պատմամշակութային կոթողների առկայություն - Տեղեկատվական աղբյուրների հասանելիություն - Կապի միջոցների (փոստ, բջջային հեռախոսակապ, ինտերնետ) հասանելիություն	- Գործազրկության բարձր մակարդակ - Բնակչության թվաքանակի նվազում - Միջհամայնքային ճանապարհների վատ վիճակ - Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ - Կոյուղու բացակայություն - Աղբահանության բացակայություն - Մշակութային, ժամանցի և սպորտով զբաղվելու վայրերի բացակայություն - Անավարտ մշակույթի տուն - Էլեկտրահաղորդակցման լարերի վատ վիճակ - Խմելու ջրի ցանցի վատ վիճակ - Վատ վիճակում գտնվող բնակելի տների մեծ

15. Արտակարգ իրավիճակներին արձագանքելու գործիքների (տարհանման պլան) առկայություն	քանակ 12. Բնակչության ցածր վճարունակություն 13. Սեղավատարների բացակայություն 14. Ծառայությունների (հրշեջ-փրկարար, շտապ օգնության) դժվար հասանելիություն 15. Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների բացակայություն, համայնքի առջև ծառացած առաջնահերթ խնդիրները լուծելու համար 16. Աղետների ռիսկերի նվազեցման, ԱԻ-ին արձագանքման և հետևանքների վերացման վերաբերյալ գիտելիքների ցածր մակարդակ, 17. Կլիմայի փոփոխությանը դիմակայելու և հարմարվելու համար անհրաժեշտ գիտելիքների, իրազեկվածության և հմտությունների ոչ բավարար մակարդակ:
<i>Հնարավորություններ (Օ)</i> 1. Բարենպաստ միջավայր ներդրողների համար 2. Գյուղատնտեսական միավորումների հիմնում 3. Համայնքի պատրաստակամություն հնարավորինս աջակցելու համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը	<i>Վտանգներ (T)</i> 1. Պետական ոչ արդյունավետ մոտեցումներ 2. Բնածին և մարդածին երևույթների հետ կապված սպառնալիքներ 3. Անտառահատումներ

4.3 Կրթական ոլորտ

Համայնքի կրթական համակարգը ներառում է նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառները:

Լորուտ գյուղում դպրոցը հիմնադրվել է 1924թ-ին: 974 թ-ն շահագործման է հանձնվում ներկայիս շենքը՝ նախատեսված 400 աշակերտի համար: Դպրոցը տիպային եռահարկ քարե շինություն է: Դպրոցի ընդհանուր մակերեսը կազմում է 2564 մ²:

Դպրոցը ունի երեք մասնաշենք: Հիմնական եռահարկ մասնաշենքը մասմաբ վերանորոգվել է, տանիքը փոխարինվել է թիթեղյա ծածկով: Տարրական դասարանների մասնաշենքը, հանդիսությունների դահլիճը և սպարտդահլիճը ունեն վերանորոգման և տանիքի ծածկի փոխման կարիք, ինչի պատճառով գրեթե չեն շահագործվում:

Դպրոցն ունի 15 դասասենյակ, համակարգչային սենյակ, ԼՁՊ դասասենյակ, լաբորատորիա, ուսուցչանոց, հաշվապահության և տնօրենի սենյակ, գրադարան, բացօթյա սպորտհրապարակ²:

Մանկապարտեզի շենքը մեկհարկանի շինություն է: Շենքի մի մասը գտնվում է նորմալ վիճակում, իսկ մյուս մասը ունի վերանորոգման կարիք: Շենքն ունի հիմքի ամրացման կարիք:

²Դպրոցի և մանկապարտեզի շենքերի մանրամասն վերլուծությունը նայել էջ 77-ում:

Մանկապարտեզն ունի խնդիրներ կապված ջրամատակարարման և սանհանգույցների հետ, ինչպես նաև ունի կահավարման, գույքի, մեթոդական նյութերի կարիք:

Դպրոցի ՌԻՑԿՎ վերլուծություն

<i>Ուժեղ կողմեր (S)</i>	<i>Թույլ կողմեր (W)</i>
- Դպրոցը տիպային շինություն է: - Ապահովվածություն աշխատակազմով - Դպրոցն ունի ջրամատակարարում /ըստ գրաֆիկի/ - Դպրոցն ունի ջրահեռացման համակարգ - Փազաֆիկացում - Դպրացն ունի լրկալ ջեռուցման համակարգ - Դպրոցն ունի 40 մեղվափեթակ և նույնքան էլ մեղվաղնտանիք - Հատուկ ծառայությունների ավտոմեքենաների մոտեցման համար ազատ են դպրոցամերձ ուղիները - Տեղեկատվական աղբյուրներից դպրոցին հասանելի են հանրային հեռուստատեսությունը և համացանցը: - Աղետի արձագանքման գործիքներից դպրոցում առկա են ✓ տարահանման պլան, ✓ էլեկտրական զանգ, ✓ հակահրդեհային վահանակներ և կրակմարիչներ, ✓ ստացիոնար և բջջային հեռախոսակապ, ✓ համացանց	- Դպրոցի տեղակայման վայրը երբևիցե չի հետազոտվել: - Նյութատեխնիկական և և՛ բավարարեալ, և՛ գույքի և մեթոդական նյութերի պակաս - Դպրոցում չկա բուժկետ - Դպրոցն ունի պատուհանների և տանիքի (մի մասը ասբեշիֆերից է) փոփոխման կարիք - Դպրոցն չունի հալոցքաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ: - Դպրոցն ունի խնդիրներ կապված ջրամատակարարման և ջրահեռացման հետ - Չկան փակցված արտակարգ իրավիճակների ժամանակ անձնակազմի և աշակերտների հանձնարարականներն ու հրահանգները - Դպրոցը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն աշակերտների հատուկ կարիքներին: - Դպրոցի աշխատակազմի և աշակերտների շրջանում տարիանման պլանի վերաբերյալ իմացության ցածր մակարդակ - Դպրոցում փակցված չեն տարիանման ուղիները նշող ցուցանակներ - Դպրոցում չեն կազմակերպվում ուսումնական տարիանումներ - Դպրոցում փակցված չեն հրդեհի, երկրաշարժի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ գործելակերպի կանոնների վերաբերյալ հուշաթերթիկներ - Դպրոցի աշխատակազմի և աշակերտների համար երբևիցե չեն կազմակերպվել աղետների և արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու, արձագանքելու և դիմակայելու դասընթացներ - Դպրոցի անձնակազմի և աշակերտների գերակշիռ մասը չունեն համապատասխան գիտելիքներ և ունակություններ արտակարգ իրավիճակներում գործելակերպի, հակահրդեհային պաշտպանության և առաջին օգնության վերաբերյալ

Հնարավորություններ (O)	Վտանգներ (T)
- Բարենպաստ միջավայր ներդրողների համար - Համայնքի բնակչության, ՏԻՄ-ի և դպրոցի անձնակազմի պատրաստակամությունը հնարավորինս աջակցելու դպրոցի հետ առնչվող խնդիրների լուծման գործընթացներին - Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության շարունակում մարզի քաղաքներում: - Աղետներին պատրաստվածության վերաբերյալ անձնակազմի և աշակերտների ԱՌՆ ուսուցման կազմակերպում - Ուսումնական տարիանումների կազմակերպում տարին երկու անգամ	- Պետական մոտեցումների բացակայություն - Աշակերտների թվաքանակի նվազում - Բնածին և մարդածին երևույթների հետ կապված սպառնալիքներ - Ջրամատակարարման և ջրահեռացման հետ կապված խնդիրները, սանհանգույցների վատ վիճակը, տանիքածածկը, ինչպես նաև փայտով ջեռուցման կազմակերպումը, վտանգ են ներկայացնում անձնակազմի և երեխաների առողջության համար:

4.3.1 Լորուտ համայնքի դպրոցի և մանկապարտեզի շենքերի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման աշխատանքների

Սույն աշխատանքի նպատակն է գնահատել Լորուտ համայնքի դպրոցի և մանկապարտեզի շենքերի տեխնիկական վիճակը և սեյսմիկ խոցելիության մակարդակը և տալ առաջարկներ օբյեկտների հետագա անվտանգ շահագործման և սեյսմազիսկվածության բարձրացման վերաբերյալ:

Դպրոցի և մանկապարտեզի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- օբյեկտը բնութագրող տեխնիկական փաստաթղթերի և այլ նյութերի համակարգում և վերլուծություն,
- օբյեկտի մանրակրկիտ հետազննություն,
- օբյեկտի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատում,
- առաջարկություններ օբյեկտի հետագա անվտանգ շահագործման վերաբերյալ:

Աշխատանքում օգտագործվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «ՍՊԱՐԻՄ» ՊՈԱԿ-ի կողմից կատարված «Հայաստանում աղետների վնասների կանխարգելման և երեխաների խոցելիության նվազեցման» ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքները և ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23 N 797-Ն «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» որոշման Հավելված 1-ի հիմնական դրույթները:

4.3.2 Լորուտ համայնքի դպրոց

ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի դպրոցը կառուցվել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի կողմից 1963 թվականին մշակված (տիպարային նախագծի համարը՝ А2-02-04KM) նախագծով: Շենքերը հաշվարկված են 7 բալ սեյսմակայունությամբ:

Դպրոցի նախագծային հզորությունը հաշվարկված է 480 աշակերտի համար: Ըստ դպրոցի տնօրենի տեղեկատվության՝ 2015թ. դպրոցում սովորում է 104 աշակերտ:

ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի դպրոցը կառուցվել է 1974 թվականին, տեղադրված է Լորուտ համայնքի հարավ-արևմուտքում, մեծ թեքությամբ տեղանքում: Դպրոցը կազմված է մեկ եռահարկ մասնաշենքից, մեկ միահարկ մասնաշենքից և մեկ կառույց հանդիսացող միահարկ մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքից, որոնք միմյանց միանում են միջանցքով:

Դպրոցի ուսումնական մասնաշենքերը կառուցվել են լայնական կրող ու երկայնական կապող պատերով և միջհարկային ծածկերի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով: Կրող պատերի առանցքային հեռավորությունները 7.2մ են, իսկ երկայնական պատերինը՝ 12.0մ: Մասնաշենքերի միջանցքի հատվածամասում, որի լայնությունը 3.5մ է, կրող լայնական պատերի փոխարեն նախատեսված են միաձույլ երկաթբետոնե շրջանակներ:

Մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգի լուծումը տրված է թվով 3 կրող երկայնական ու կապող լայնական պատերով և վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակով: Կրող պատերի առանցքային հեռավորությունները 9,0մ են, իսկ լայնական պատերինը՝ 6.0մ և 18.5մ:

Լորուտ համայնքի դպրոցիականադիտականհետազննությանարդյունքումպարզվելէ.

- Լոռու մարզի Լորուտ համայնքի դպրոցըկառուցվել է 1970-ականթվականներին, մինչև Սպիտակի 1988թ. ավերիչ երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որշենքերի փաստացի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման Նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի պահանջների հետ:
- Մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրերում կան զգալի վնասվածքներ և ճաքեր, որոշ շինարարական աշխատանքներ իրականացվել են թերություններով:
- Սպիտակի 1988թ. երկրաշարժի ժամանակ առաջացել են թույլ վնասվածքներ, մասնավորապես՝ առանձին տեղերում տեղի է ունեցել ծեփերի թափվում, միջնորմներում և միջնորմների ու կրող կոնստրուկցիաների միջև կարաններում առաջացել են մինչև 4մմ բացվածքի լայնությամբ ճաքեր, տեղի են ունեցել ծածկերի սալերի միմյանց նկատմամբ կողաշարժեր, որի հետևանքով Նրանց միջև կարաններիառաստաղի սվաղին առաջացել են մինչև 2մմ բացվածքի լայնությամբ ճաքեր: Ըստ ՀՀ ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման Նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի 24 աղյուսակի պահանջների, դպրոցի վնասվածությունը գնահատվում է 1-ին աստիճանի (վնասվածքի մակարդակը՝ կոնստրուկցիաների թույլ վնասվածքներ):

Սպիտակի 1988թ. երկրաշարժիցհետոդպրոցումուժեղացմանաշխատանքներչենիրականացվել:

- ՀամաձայնՀայաստանիհանրապետությանքաղաքաշինությաննախարարի 2009թ. Դեկտեմբերի 8-ի թիվ 282-Ն հրամանով հաստատված«Բնակելի, հասարակականևարտադրականշենքերիուշինություններիտեխնիկականվիճակիհետազննությանմեթոդականցուցումների» ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի դպրոցի(անշարժ գույքիևկատմամբսեփականությանիրավունքի գրանցմանթիվ969146վկայականովամրագրված) մասնաշենքերիտեխնիկականվիճակը գնահատվումէ անբավարար (3-րդաստիճան), այնէ՝ կոնստրուկտիվտարրերիշահագործումը հնարավոր է միայնկապիտալնորոգումից հետո:

- Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առ 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների», Լորուտ համայնքի դպրոցի շենքերի սեյսմիկ խոցելիության մակարդակը (շենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է բարձր, այն է՝ երբ օբյեկտի տարածքում մինչև 8 բալլ ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը $A_{max}=0.2g$) հնարավոր երկրաշարժի ժամանակ մասնաշենքերի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ լուծեղված վնասվածքներ՝ վնասվածքի աստիճանը 4-րդ համաձայն ՀՀ ՀՇՆ II-6.02-2006 նորմերի 24 աղյուսակի:

Առաջարկություններ

Ելնելով ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի դպրոցի ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներից, շենքի փաստացի տեխնիկական վիճակից, վնասվածության աստիճանից ու սեյսմիկ խոցելիության մակարդակից, և առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀ ՀՇՆ 20-06-2014 [4] շինարարական նորմերի հավելված 1-ի աղյուսակ 1-ով, դպրոցի վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ընդունվում է «Սեյսմազինվածության բարձրացում»:

Սեյսմազինվածության բարձրացման եղանակների ընտրությունը կատարել համաձայն «Հայաստանում աղետների վնասների կանխարգելման և երեխաների խոցելիության նվազեցման» ծրագրի հաշվետվության մեջ դասակարգված «Ա» տիպի դպրոցների համար նախատեսված առաջարկությունների:

4.3.3 Լորուտ համայնքի մանկապարտեզ

- ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի նախագծային փաստաթղթերի վերլուծություն չի իրականացվել դրանց բացակայության պատճառով: Ըստ մանկապարտեզի տնօրենի տեղեկատվության՝ 2015թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ մանկապարտեզի աճախում է 30 երեխա:

ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզը կառուցվել է 1960-ական թվականին, տեղադրված է մեծ թեքության վրա՝ տեղանքում, մի հատվածում մասունքային կառուցվածքներով:

Լորուտ համայնքի մանկապարտեզի կոնստրուկտիվ համակարգի լուծումը տրված է քարեշարվա ծրագրով և կապող երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկի ու վերնածածկի հորիզոնական կոշտակառուցվածքով:

ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի մասնակապարտեզի շենքի նախագծային փաստաթղթերի վերլուծություն չի իրականացվել դրանց բացակայության պատճառով:

- ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին, մինչև Սպիտակի 1988թ. ավերիչ երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ շենքի փաստացի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀ ՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի պահանջների հետ:
- Շենքի կոնստրուկտիվ տարրերում կան ուժեղ վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ, շինարարական աշխատանքներ իրականացվել են զգալի թերություններով:
- Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առ 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» ՀՀ

Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար (3-րդ աստիճան), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

- Համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի առ 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների», Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը (շենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է բարձր, այն է՝ երբ օբյեկտի տարածքում մինչև 8 բալ ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը $A_{max}=0.2g$) հնարավոր երկրաշարժի ժամանակ շենքի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ ուժեղ վնասվածքներ՝ վնասվածքի աստիճանը 4-րդ համաձայն ՅՈՒՆԵՍԿՈՒ II-6.02-2006 նորմերի 24 աղյուսակի:

Առաջարկություններ

Ելնելով ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներից, նրա փաստացի տեխնիկական վիճակից, վնասվածության ու սեյսմիկ խոցելիության աստիճանից, և հաշվառելով այն հանգամանքը, որ ըստ գործող ՅՈՒՆԵՍԿՈՒ II-6.02-2006 նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի տարածքը գտնվում է երկրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $A_{max}=0.3g$ արագացումով (բալականությունը մինչև 8-9 ըստ MSK 64 սանդղակի), գտնում ենք, որ շենքի սեյսմազինվածության բարձրացման և վերակառուցման աշխատանքների ծախսերը կգերազանցեն համապատասխան տեխնիկատնտեսական արդարացված ծախսերից, ուստի ավելի նպատակահարմար է շենքի ապամոնտաժումը և նորի կառուցումը: Հակառակ դեպքում այդ շենքը հնարավոր չէ շահագործել նույն գործառնական նշանակության նպատակով, քանի որ տարածաշրջանի հնարավոր ուժեղ երկրաշարժի ժամանակ շենքը կփլուզվի, որը կբերի մարդկային զոհերի և նյութական վնասների:

Կից ներկայացվում են առանձին դրվագներ օբյեկտներում կատարված աշխատանքներից:

Լորուտ համայնքի դպրոց

Լորուտ համայնքի դպրոց





Դպրոցի մասնաշենքերի ճակատների տեսքեր



Պատերի քարաշարվածքի վնասվածքների և ճաքերի տեսքեր





Միջհարկային ծածկերի փլուզումներն առաջնահերթ հավաքողի և/կամ սալերի վնասվածքի տեսքեր



Տանիքներ






Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների ջրերի ազդեցությունից առաջացած վնասվածքների տեսքեր



Միջնորմների վնասվածքների և ճաքերի տեսքեր




Վերանորոգված հատակների տեսքեր



Հատակների վնասվածքների տեսքեր



Սանդուղքների վնասվածքների տեսքեր



Երբին հարդարանքների վնասվածքների տեսքեր





Սալվաճքի անբավարար վիճակի տեսքեր



Լորուտ համայնքի մանկապարտեզ



Մանկապարտեզի շենք ճակատների տեսքեր





Պատերի վնասվածքների և ճաքերի ու հողմնահարված հատվածների տեսքեր



Վերնածածկի հավաքովի ե/բ սալերի վնասվածքի տեսքեր



Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների վնասվածքներ



Վերանորոգված հատակների տեսքեր





Հատակների վնասվածքների տեսքեր



Սալվածքի անբավարար վիճակի տեսքեր



5. Սոցիալական ծառայությունների դիմակայունություն

Երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով համայնքում գործում է *Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը*, սակայն այս հանձնաժողովը մարզինալ երեխաների և ընտանիքների խնդիրները դիտարկելիս աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության պլանավորում տեսանկյունը չի դիտարկում:

Համայնքում երեխաներին հոգեբանա-սոցիալական կարողությունների զարգացումը տեղի է ունենում հիմնականում ֆորմալ հանրակրթության շրջանակներում՝ դաստիարակության միջոցով: 10-րդ դասարանում աշակերտներն անցնում են հոգեբանություն պարտադիր առարկան՝ շաբաթական մեկ ժամ, տարեկան ընդհանուր տևողությունը 34 ժամ: Պետական կառույցների կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հոգեբանասոցիալական կարողությունների զարգացում տեղի չի ունեցել:

Սոցիալական աջակցություն է ստանում համայնքի 18 ընտանիք, որոնց կազմում կան 10 տղա և 8 աղջիկ: Համայնքը չունի սոցիալական աշխատող, իսկ մարզում դեռևս ձևավորված չեն ինտեգրված սոցիալական ծառայությունները: Մարզում գործում է Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, որի կազմում կա 6 աշխատակից: Բաժնի ենթակայությամբ գործում է Թումանյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (ունի 8 աշխատակից), որի պատասխանատվության ոլորտում են Լորուտ գյուղի բնակչության սոցիալական խնդիրները, և որի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- o սպասարկման տարածքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հայտնաբերումը, հաշվառումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալական աջակցության տրամադրումը.

- o սոցիալական աջակցության բնագավառի պետական կարգավորման գործառնությունների իրականացման ապահովումն իր իրավասությունների շրջանակներում.
- o սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումն իր սպասարկման տարածքում:

Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- o հայտնաբերում է աղքատ ընտանիքներին և սահմանված կարգով նրանց հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.
- o պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը.
- o իրականացնում է դրամական օգնության նշանակումը և վճարման կազմակերպումը.
- o մասնակցում է մարզի, գործակալության սպասարկման տարածքի, այդ տարածքի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.
- o **հավաքագրում է մարդասիրական օգնության ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ.**
- o ապահովում է քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն հաճախորդների անհատական պահանջմունքներին.
- o աջակցում է միջազգային և տեղական կազմակերպություններին կազմակերպելու անվճար սննդի ծառայություն.
- o համագործակցում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ.
- o օրենսդրությամբ սահմանված կարգով անօթևան անձանց ուղեգրում է անօթևան անձանց ժամանակավոր օթևան.
- o մասնակցում է թափառաշրջիկության և մուրացկանության խնդիրների լուծման, ինչպես նաև դրանց կանխարգելման ուղղությամբ այլ մարմինների կողմից ծրագրերի իրականացման աշխատանքներին.
- o գործակալությունն դիմած անձանց ապահովում է նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ, առավել խորը մասնագիտական օգնության կարիքի դեպքում նրանց կողմնորոշում այլ կազմակերպություններ, որտեղ կարող է ցուցաբերվել մասնագիտական օգնություն.
- o հաշվառում է խնամք ստանալու համար դիմած քաղաքացիներին, ուսումնասիրում նրանց, սոցիալ-տնտեսական և ընտանեկան պայմանները, աջակցում նրանց փաստաթղթերի ձևակերպմանը և ուղեգրում խնամք տրամադրող համապատասխան կազմակերպություն.
- o կազմում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած երեխաների կյանքի որակի նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և իրականացնում դրանք ինքնուրույն կամ համագործակցելով համապատասխան կրթական, բուժական կամ այլ կազմակերպությունների հետ.

- o օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրում է առանց ծնողական խնամքի մնացած՝ բնակարանի կարիք ունեցող երեխաների բնակարանային պայմանները.
- o հաշվառում է գործակալության սպասարկման տարածքում բնակվող հաշմանդամներին և օժանդակում նրանց համար մշակված անհատական վերականգնողական ծրագրերի իրականացմանը.

Լոռու մարզպետարանի *Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի* երկու աշխատակից 2014 թվականի նոյեմբերին մասնակցել են Առետների ռիսկի նվազեցման ազգային պատժորմի և ՄԱԿ-ի մանակական հիմնադրամի կողմից կազմակերպված “Հայաստանում սոցիալական պաշտպանության ազգային համակարգերի դիմակայունության հզորացման” ծրագրի *Աղետների ռիսկի նվազեցման ներածական եռօրյա դասընթացին*:

Առողջապահական հաստատություններից Լորուտում առկա է բուժկետ, որը գործում է Լոռու մարզպետարանի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը: Վերջինիս գործառնություններից են.

- արտակարգ իրավիճակներում մարզում բնակչության բժշկական օգնության, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ապահովման կազմակերպումը.
- մարզի տարածքում սոցիալական հիմնահարցերի, պետական նպաստների համակարգում տիրող իրավիճակի, բնակչության միգրացիայի, զբաղվածության և սոցիալական պաշտպանվածության հարցերի համալիր ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը և դրանց հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացումը.
- վարակիչ և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դինամիկայի ուսումնասիրությունների ու վերլուծությունների կազմակերպումը, դրանց կանխարգելման ծրագրերի մշակումը.
- սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառման, սոցիալական ծրագրերի շրջանակներում մարդասիրական օգնությունների բաշխման աշխատանքների վերահսկումը.

Չնայած այն հանգամանքին, որ համայնքը բարձրացրել է առողջապահական վիճակի բարելավման հետ կապված մի շարք խնդիրներ, այնուամենայնիվ պետք է նշել, որ չեն անդրադարձել համայնքի արտակարգ իրավիճակներում բուժանձնակազմի գործունեությանն առնչվող հարցերին, ինչպես նաև բուժկետը չունի աղետների պատրաստվածության և արձագանքման պլան:

Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանության անչափահասների հետ վարչության՝ աղետներին պատրաստվածության միջոցառումների նախաձեռնում և իրականացում, ապա ըստ ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 29-ի 806-Ն որոշման, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հիմնական գործառնություններից են.

- տեխնաժին և տարերային աղետների, խոշոր վթարների ու հրդեհների, զանգվածային անկարգությունների, այլ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, ինչպես նաև միջտարածքային, այլ հատուկ միջոցառումների ժամանակ բնակչության փրկության, առանց հսկողության մնացած գույքի պահպանության և հասարակական կարգի ապահովման աշխատանքներում Հայաստանի

Հանրապետության ոստիկանության համակարգի ծառայողների ու զինծառայողների ներգրավում:

- զորահավաքային առաջադրանքների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման կազմակերպում, ռազմական դրության պայմաններում և խաղաղ ժամանակ ծագած արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ծառայությունների, մարմինների, ուսումնական հաստատությունների, ոստիկանության զորքերի մարտունակության բարձրացման համալիր միջոցառումների մշակում և իրականացում:

6. Համայնքի դիմակայունություն

Համայնքի 2012-2016թթ զարգացման ռազմավարական նպատակներն են.

- զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքն ու հանգիստը,
- ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը տարվա բոլոր եղանակներին,
- համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով:

Սույն նպատակներին հասնելու համար նախատեսված են մի շարք ծրագրեր, մասնավորապես.

1. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի հիմնական նորոգման ծրագիր, որի շրջանակներում նախատեսված էր վերակառուցել շուրջ 10 կմ երկարությամբ ջրագիծ՝ 150-180 հազ. ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ արժողությամբ, արդյունքում՝ 100%-ով լուծելով համայնքի շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը: Անհրաժեշտ գումարի մի մասը պետ է հատկացնել համայնքը, իսկ մնացածի համար նախատեսված էր գտնել վիրատու: Հարկ է նշել, որ դեռևս այս ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել անհրաժեշտ գումարի բացակայության պատճառով: Համայնքի ֆինանսական միջոցների շրջանակներում միայն կարողանում են վթարված տեղամասերը վերանորոգել: Այնուամենայնիվ համայնքը սույն խնդիրը համարում է խիստ կարևոր և առաջնահերթությունների ցանկում այն զբաղեցնում է երկրորդ տեղը:
2. Մշակույթի տան, գրադարանի և բուժկետի շենքի վերակառուցում և վերանորոգման ծրագիր, որի շրջանակներում նախատեսված էր կառուցել համայնքային կենտրոն, վերանորոգել բուժկետը և գրադարանի շենքը: Սակայն այս ուղղությամբ ևս աշխատանքներ չեն իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
3. Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգման ծրագիր, որի շրջանակներում նախատեսված էր բարեկարգել ներհամայնքային 10 կմ երկարությամբ ճանապարհները: Ծրագիրը նախատեսված էր իրականացնել նվիրատվությունների միջոցով՝ աշխատանքներում ներգրավելով համայնքի բնակիչներին: Սակայն այս ծրագիրը ևս չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

Բնականաբար, համայնքի սոցիալ տնտեսական զարգացման վերոհիշյալ ծրագրերը կնպաստեն երեխաների խոցելիության նվազեցմանը, որոնք սակայն դեռևս չեն իրականացվում: Համայնքների խոշորացման ներկա գործընթացների հնարավոր ազդեցությունը սույն գործընթացի վրա ևս հնարավոր չէ կանխատեսել՝ տվյալ գործընթացում առկա անորոշությունների պատճառով:

Երեխաների աղետների խոցելիության նվազեցման ուղղությամբ համայնքի կողմից այլ միջոցառումներ չեն պլանավորվել: Բնականաբար համայնքի բյուջեում նաև չեն նախատեսվել հատկացումներ համապատասխան ծրագրերի և միջոցառումների համար:

Համայնքի ղեկավարը և ավագանու անդամները մասնակցելով «ԱՌՆ գործողությունների կայունության ապահովում» ծրագրի շրջանակներում իրականացված հանդիպումներին, աշխատաժողովին, իսկ հետագայում ներգրավված լինելով համայնքի ՏՄՌԿ ուսումնասիրության գործընթացներին՝ ձեռք են բերել որոշակի գիտելիք ու կարողություն, ինչպես նաև նրանց մոտ ձևավորվել է որոշակի դիրքորոշում՝ երեխաների և կանանց խոցելիության ուռիսկի նվազեցման խնդիրների գիտակցման առումով: Եվ, չնայած այն բանին, որ նրանց կողմից դեռևս չկան որոշակի իրականացված աշխատանքներ՝ ուղղված երեխաների անվտանգությանը, համայնքի ԱՌՆ խնդիրների առաջնահերթությունների ցանկում **դրանք առաջինների մեջ են ներառվել:**

Ինչ վերաբերում է համայնքի բնակիչների՝ երեխաներին և կանանց սպառնացող աղետների և երեխաների խոցելիության իրազեկմանը, կարելի է փաստել, որ գործնականում չի իրականացվում, քանի որ համայնքապետարանում առկա «ԱՌՆ շարժական գրադարանից» (որից համայնքի բնակչությունը չի օգտվում), համապատասխան տեղեկատվական պաստառներ կան դպրոցում, որը ևս խիստ անբավարար է համայնքի բնակչության իրազեկման առումով: Համայնքային ԱՌՆ ծրագրերում կանանց և երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ներգրավվածության մասին համայնքի ղեկավարից ստացված տեղեկատվության համաձայն հատուկ ԱՌՆ-ին նվիրված ծրագրեր չեն իրականացվել: Սակայն ապագայում, հաշվի առնելով համայնքի ՏՄՌԿ ուսումնասիրության բացահայտումները, նման ծրագրերի իրականացման դեպքում հնարավորինս կապահովվի կանանց և երեխաների (տղաների և աղջիկների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող) ակտիվ ներգրավվածությունը:

7. Համայնքի մատչելիության նկարագրություն

Համայնքի մատչելիության վերաբերյալ տեղեկությունները հավաքվել են համայնքի ղեկավարի, դպրոցի տնօրենի, համայնքի բնակիչների տված տեղեկությունների, ինչպես նաև ակնադիտական զննման արդյունքում:

Պետք է նշել, որ միջհամայնքային ճանապարհները գտնվում են վատ վիճակում են և ունեն հիմնանորոգման և ասֆալտապատման կարիք: Ներհամայնքային ճանապարհները գրունտային են, ունեն բարեկարգման, ասֆալտապատման և լուսավորման կարիք: Համայնքում առկա 2 ավտոմոբիլային կամուրջները ևս ունեն վերանորոգման կարիք: Վիճակն ավելի վատանում է անձրևների և ձյան ժամանակ:

Համայնքի հիմնական շինությունները /դպրոց, մանկապարտեզ, համայնքապետարան, բուժկետ, փոստ/ մատչելի չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող հաշմանդամների համար, չունեն թեքահարթակներ: Սակայն հարկ է նաև նշել, որ տվյալ պահին համայնքում նման հաշմանդամություն ունեցող անձինք չկան:

ԼՈՌԻՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՐԻՆԻ ՉԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Disaster Risk Reduction National Platform

Disaster Risk Analysis of Lorut Community of Lori Region

Սույն ուսումնասիրությունը մշակվել և տպագրվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված “Աղետների ռիսկի նվազեցման գործողությունների կայունության ապահովում Միջին Ասիայում և Հարավային Կովկասում” ծրագրի շրջանակներում: Ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակային են և որևէ ձևով չեն արտահայտում Եվրամիության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետները:

This publication has been produced within the framework of “Sustaining DRR Actions at Scale in South Caucasus” project funded by the European Union and implemented by the United Nations Children's Fund (UNICEF). The contents of this publication are the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and UNICEF



Humanitarian Aid
and Civil Protection

